


Universitäts- und Landesbibliothek Bonn

Patmowt'iwn T'at'arac'

Yerowsagêm, 1870

urn:nbn:de:hbz:5:1-10026

Gousson 3096



Handwritten mark

20

262

F S

Ն 3096

Ն Շ Խ Ա Ր Ք

Հ Ա Յ Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն



Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Ք

Հ Ե Ղ Ի Ն Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ք Ե Ի Թ Ա Ր Ք

Մ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ք Ն Ա Խ Ն Ի

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ա Յ



Յ Ե Ր Ո Ւ Ս Ա Ղ Ե Մ

Ի Տ Պ Ա Ր Ա Ն Ի Ս Ր Բ Ո Յ Յ Ա Կ Ո Վ Բ Ե Ա Ն Յ

-1870-

3096

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ
ՎԵՀԱՓԱՌՍ. ԿԱԹՈՒՂՈՍԿՈՍԻ

ՀՐԱՄԱՆԱԻ

ՊԱՏՐԻԱՐԻՒՄՈՒՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

Տ. ԵՍԱՅԵԱՅ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ի ՊԱՏՐԻԱՐԻՒՄՈՒԹԵԱՆ Կ. ՊՕԼՍՈՅ

Տ. ՄԿՐՏՉԻ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ

դիւր
պէնտ
նէ, ի
պաճիւ
հանգի
յիւստ
Տարգի
ինչ է
հանան
իւրիւն
պէնտ
ոմանց
հրոյն
Ժո-Ժո
նորին
արբին
ընդիւ
նախ
Ս
Մասիւ
ո-լորի
Գործ
Գրոն
նապ
Ժայն
ոյոս
դոստ

ՍՈՒՐ և զօրո-լի-ն լեզևամ-ոյն 'ի հիւս' ոչ Տիայն
 զլիշխանո-լի-ն քաջեցիկն զքանս Հայկայ , այլ և զճա-
 րէնագրո-լի-ն խի նորին և զպարճո-լի-նն 'ի սիլբա-
 նէ , իսպառ ընջեցին յերկրէ 'ի հո-ր գոպեալ . զորոց
 զլաճի-նն խի արենլայ այսօր Հայ դարո-լի-ն , շերտ-
 իանգնել գոնէա զպերճո-լի-ն նախն-ոյն ի-ր ժառանգ 'ի
 յիշատակարանս արձանական' որ էրիայնալեացն է յիւանս
 ճարգիան : Որպէս Տիւն ցարդ . այսպէս և յապայս ոչ-
 քնէ Եգիպ և Գարնէ լրո-մն արենլայ զարո-լի-նն Հայ-
 կանն . այլ Տիայն Բաառիանայի ժոգո- Պախարիլ 'ի լա-
 ժոգանս' 'ի Գի-պ ինչ ինչ նշխարայ Հայկանի Մա-
 րէնագրո-լի-նն . զոր անխոնջ ջան և անբասիր ագահն
 ոմանց Տերոց Գրասիրայ Նախահարց' 'ի Բայ իրղեցին 'ի
 հրոյն դարձանէ 'ի հալածանն անդ անխո-սաթելի' յան-
 ժո-ժո-լի-նէ խանդակալ ընջի-ն ճղեալ : Որք և այսօր
 նորին Նշխարք Բայցորդք ճարենից նոցին էն որ լրո-սա-
 արեն զճանիո-նն Աղգիս և լրո-սա-որեացն յապայս :
 զյիշատակն զարլո-ցեալ 'ի սիրաս նոցուն զար-լի-ննն
 Նախահարց և զպերճո-լի-ննն :

Աս 'ի արձանագրել 'ի քիո զայսպիսիս Նշխարս
 Մարէնագրո-լի-նն Հայկանն , 'ի խոհորդ ճղեալ
 ո-լախի Տիաբանո-լի-նն Սրբոց Յայնլի-ննն , յե-ն 'ի
 Գործ արչի քառագրել ՂՆՇԽԱՐԻՍ ՀԱՅ ՄԱՏԵՆԱ-
 ԳՐՈՒԹԵԱՆ յանիորո-սաք լայելս Բանասիրայ Աղգիս
 և ապագայ ճանիանց . որ և հասոր հասոր 'ի լոյս ըն-
 ժայեցի զորլախի ներեցէ ժամանակն , և 'ի յե-ոս Բեր-
 ցո-ս հէպղե-սէ յայսպիսեայ արձանագր Գործնց և յՅ-
 դո-սո-ժոց Մարէնագրո-լի-ննն :

Ն

Ո Ս Ի

Ս Մ Ի

Ս Ո Յ

The first part of the book is devoted to a general
 description of the country and its inhabitants. The
 author describes the various tribes and their
 customs, and also the different kinds of
 animals and plants which are found in the
 country. He also mentions the different
 kinds of food which they eat, and the
 different kinds of clothing which they wear.
 The second part of the book is devoted to a
 description of the different kinds of
 animals and plants which are found in the
 country. He also mentions the different
 kinds of food which they eat, and the
 different kinds of clothing which they wear.
 The third part of the book is devoted to a
 description of the different kinds of
 animals and plants which are found in the
 country. He also mentions the different
 kinds of food which they eat, and the
 different kinds of clothing which they wear.
 The fourth part of the book is devoted to a
 description of the different kinds of
 animals and plants which are found in the
 country. He also mentions the different
 kinds of food which they eat, and the
 different kinds of clothing which they wear.
 The fifth part of the book is devoted to a
 description of the different kinds of
 animals and plants which are found in the
 country. He also mentions the different
 kinds of food which they eat, and the
 different kinds of clothing which they wear.
 The sixth part of the book is devoted to a
 description of the different kinds of
 animals and plants which are found in the
 country. He also mentions the different
 kinds of food which they eat, and the
 different kinds of clothing which they wear.
 The seventh part of the book is devoted to a
 description of the different kinds of
 animals and plants which are found in the
 country. He also mentions the different
 kinds of food which they eat, and the
 different kinds of clothing which they wear.
 The eighth part of the book is devoted to a
 description of the different kinds of
 animals and plants which are found in the
 country. He also mentions the different
 kinds of food which they eat, and the
 different kinds of clothing which they wear.
 The ninth part of the book is devoted to a
 description of the different kinds of
 animals and plants which are found in the
 country. He also mentions the different
 kinds of food which they eat, and the
 different kinds of clothing which they wear.
 The tenth part of the book is devoted to a
 description of the different kinds of
 animals and plants which are found in the
 country. He also mentions the different
 kinds of food which they eat, and the
 different kinds of clothing which they wear.

4U
@U

1 S

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Թ Ա Թ Ա Ր Ա Յ

ՎԱՐԴԱՆԱՅ ՊԱՏՄՉԻ

ՀԱՆԵԱԼ Ի ՉԵՌԱԳԻՐ ՕՐԻՆԱԿԱՅ
ԹԱՆԳԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԶԱԿՈՎԲԵԱՆՅ



ՅԵՐՈՒՍԱԿԵՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԷԱԿՈՎԲԵԱՆՅ


—1870—

Handwritten text in a cursive script, likely a manuscript page. The text is mirrored across the page, suggesting bleed-through from the reverse side. The script is dense and fills most of the page.

Handwritten text in a cursive script, likely a manuscript page. The text is arranged in a vertical column on the right side of the page. The script is dense and fills most of the page.

Յ Ա Ռ Ա Չ Ա Բ Ա Ն

ԱՌԱՋԻՆ հասարակ Նշխարացոյն Հայ Տարեկագրո-
վեան, գործածք 'ի լոյս ընծայել, որ պարսկէ ղժառ-
մանէն և դարձոյն և ղպարսկերազմաց Թաւարաց = Ե-
գրեալ է Վարդանայ պարսկէ յաշակերպայն Վանա-
յանայ Վարդանայ 'ի ժԳ դարոս . 'ի 1247 և ընդօ-
րինակելալ 'ի 1272 . և օրինակն ղոր ունի՞ք 'ի Յեռ-
յեռագիր է նորին Գրիգորի էրեցոս Ականց անտպա-
րի 'ի Վիւիիւս = Օրինակն ըսնի առանջին յիշապակա-
րան ղգրողէն . սակայն 'ի լոսանցս օրինակին ուրէ՞ք ու-
րէ՞ք արեանի գրեալ նովին Յեռագրով " Ողորմեա՛ պէր ,
Վարդանայ ծառայի քո " : Նա էսա՛ ին է օրինակն
Միկայելի Ասորաց իսկոզիկոսի Ժամանակագրո-
վեանն , որ յայսիկ լարգժանոս-լիւն է նորին Վարդա-
նայ 'ի յիշապակարանին ծանոցելալ : Եւ լեզու և ըն-
լացք պարսկոս-լեանն իսկ ղկայէն ղսա նորին լինել հե-
ղինակոս-լիւն : Յորոս՛ 'ի պարսկոս-լեանս Թաւարաց
պարսկէ և ղչայոց լարգասորոս-լեանէ , որով և ճանն հա-
ճարի պարսկոս-լեանն Հայոց : Չոր 'ի գլուխս գլուխս
Բաժանելալ ըսք ղանաղանոս-լեանն պարագայիցն 'ի սճո
պարսկէլոց , պարսկէ 'ի պարսկոս-լիւնն :



ՄԱՐԿՈՍ

[Faint, mostly illegible handwritten text in Armenian script, likely bleed-through from the reverse side of the page.]

Վասն
ցեցե

3

Ազամ

Աստու

հայ գ

կնոջն

մուան

և սպա

մարդոյ

իսկ բա

ձաւն ի

գործել

բասար

հայն ի

Եւ

սըն չա

զամենե

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն



Գ Լ Ո Ւ Խ Ա .

Վասն Ազգին Ներսիսաց թէ ուստի կամ յորմէ
ցեղէ անկեցին եւ արեցին բազում աշխարհաց
եւ գաւառաց :

ՅԵՏ հլանելոյ աստուածաստեղծ մարդոյն
Ադամոյ 'ի դրախտէն, և պատուիրելոյ տեառն
Աստուծոյ քրանաջան աշխատութեամբ ուտել
հաց զամենայն աւուրս իւր, յաղագս խաբման
կնոջն և դաւաճանութեան պեղծ օձին, վասն
մեռանալոյ զգեղեցիկ պատուիրանն Աստուծոյ,
և ասպայսն հետէ կարօտացաւ բնութիւն
մարդոյն հեշտութեան և մարմնական զբաղման :
Իսկ բանասրկուն ստամոյս վասն չար նախան-
ձառն իւրոյ՝ հանապազ ուսուցանէր զմարդիկ
գործել զանարժանս, որպէս կայենի՛ զեղբայ-
րասպանութիւնն, և ս'իօրէն հսկայիցն՝ զյօրա-
նայն 'ի մեղս և ուտել զմեռելոտիսն :

Եւ զսոս տեսալ արարիչն բարկացեալ վա-
սն չար գործոյ մարդկանն՝ ջնջելուաւ կորոյս
զամենեւեան, պահելով սերմն մարդկութեանս

զերանելի արդարն զՆոյ : Ուստի յետ տասն
 ծննդոցն Նոյի արդարոյ , ծնաւ հայրն հաւատոյ
 որդին Թարայի մեծն Աբրահամ , որ հայր վե-
 րամբարձ անուանեցաւ . վասն զի 'ի նմանէ սե-
 բեցան բազում աղգք և աղինք , յաղագս օրհ-
 նութեանն Աստուծոյ որ ասացաւ նմա , « բաղ-
 մանալ զաւակի նորա իբրեւ զաստեղս երկնից
 և որպէս զաւազ առ ավին ծովու » : Ուստի և
 կատարեցաւն իսկ :

Զի յաղատ կնոջէն Աբրահամու ծնաւ Իսա-
 հակ . և 'ի նմանէ Յետաւ և Յակովբ . և 'ի Յա-
 կովբայ երկստասան նահապետքն . և մեծ
 մարգարէն Դաւիթ . ուստի յոյսնեցաւ 'ի տա-
 նէ և յազգաթուէ Դաւթի Բանն Աստուած
 տէրն մեր Յիսուս Քրիստոս :

Իսկ յաղախնացն Աբրահամու , որ են ա-
 նուանք նոցա միոյն Հագար և միւսոյն Կեն-
 դուրայ . 'ի Կենդուրայ ծնաւ Իմրան , որ են
 Պահլաւք . ուստի քաջն Արշակ , և սուրբն Գը-
 ըիզոր լուսաւորիչն Հայոց . Իսկ 'ի Հագարայ
 Իամայէլ , որ Թարգմանի լուսնն Աստուծոյ ,
 ուստի Իամայէլայիք : Զոր հրամայեաց Աստ-
 ուած Աբրահամու 'ի ծննդեանն Իամայէլի տալ
 նմա զպարարտութիւն երկրի , և առնել զնա
 յաղգ մեծ . և ձեռք նորա 'ի վերայ Թշնամեաց
 իւրոց , սրով և աղեղամբ առաւելքան զամե-
 նայն աղգս աջողեալ :

Իսկ Յետաւոյ յորդուցն Իսահակայ ծնան
 Յետաւայիք , որ են Սիխեթայիք սեաւք և
 վայրագք և այլագէմք , և 'ի նոցանէ ծնան Բու-

րամիճ
 դարան
 Եւ
 դոցն ե
 'ի միմ
 դուրայ
 այլագ
 նեցաւ
 Իս
 ջրն
 գայ ,
 մասն
 մաւօն
 բից .
 որ իս
 ոյսինք
 ամենե
 Ե
 զոր կ
 վասն
 Ե
 'ի Թ
 այն ,
 եաց
 բենա

ոասն
առոյ
վե-
սե-
օրհ-
աղ-
կնից
ի և

հաս-
Յա-
մեծ
տա-
ւած

ի ա-
կեն-
ր են
ԳԸ-
սրայ
ծոյ,
Հաս-
տալ
զնա
մեաց
ամե-

նան
ը և
Բ՝

բամիճք և Լեկզք, որ բնակին 'ի ծակս և 'ի դարանս, և բազում ոճիրս գործեն:

Եւ ասի թէ Եդոմայեցիք այլ 'ի ոմա ծնրն, դոցն են, որ են Ֆռանգք: Ուստի և խառնեալք 'ի միմեանս երեք աղգս այս Հագարու, Կենդուրայ և Եսաւայ, և ծնաւ 'ի սոցանէ ծնունդ այլադէմ՝ ազգեցութեամբ չարին, և անուանեցաւ Տաթար, որ ասի սուր և թեթեւ:

Իսկ սուրբն Ներսէս ասէ զսա 'ի մնացորդացն Հագարու՝ խառնեալ ընդ աղգին Գովգայ, որ 'ի Թորդոմայ, որք ունին զՍկիւթիա մասն երկրի. որ սկսանի յԱթլ գետոյ առ Եմաւօն լերամբն՝ ձգեալ մինչեւ 'ի ծովն Կասբից. ուր բնակեալ են ազգք երեսուն և երեք, որ խժական անուամբ կոչին Խուժ և դուժ. այսինքն ազգք առանձնականս: Եւ գլխաւորին ամենեցուն ասի Բուշխ:

Եւ յազգացն այնոցիկ միոյն ասի Թուղարք. զոր կարծեմք թէ այս է, որ ասին Թաթարք:

ԳԼՈՒԽ Բ.

Վասն կեցութեան, կրօնից, օրինաց եւ գշխաւորի նոցա:

Եւ որպէս յոմանց 'ի նոցանէ լուտք, ելին 'ի Թուրքաստան աշխարհէն իւրեանց աղգն այն, և մեկնեցան 'ի կողմ ինչ մասին արեւելեաց, և կային անդ աւաղակութեամբ. վայրենաբնակք և յոյժ աղքատք զբազում ժամա-

նախ : Եւ սրաշատն ինչ ոչ ունէին բայց միայն պատկերս Թաղեայ . զոր տակաւին կրէին ընդ ինքեանս 'ի պէտս կախարդութեան : Բայց ընդ արեգակն զարմանային , որպէս ընդ զօրութիւն ինչ աստուածային :

Եւ ապա յանկարծակի ուշաբերեալք , յոյժ նեղեալք 'ի Թշուառական և յաղքատ կենացն , կոչեցին յօգնութիւն զԱստուած զարարիչն երկնի և երկրի . և ուխտեցին նմա ուխտ մեծ կալ 'ի հրամանս նորա :

Որոյ երեւեալ հրեշտակ հրամանաւն Աստուծոյ 'ի կերպարանս օսկեփետուր արծուոյ , և կոչեալ 'ի ձայն և 'ի բարբառ նոցին լեզուի զգլխաւորն նոցա , որոյ անունն ասիւր Չանկրղ . և նա երթեալ կացեալ հանդէպ արծուական հրեշտակին հեռագոյնս և 'ի բացայտ իբրև նետընկէց մի . և ապա արծիւն ըստ նոցա լեզուին ասաց զամենայն հրամայեալսն Աստուծոյ :

Եւ այս է օրինքն Աստուծոյ , որ եղեալ է 'ի նոսա , զոր անուանեալ են իւրեանքն Իսաաի . առաջին՝ որ սիրեն զմիմեանս , երկրորդ՝ մի շնալ . մի՛ գողանալ . մի՛ սուտ վկայել . մի՛ զոք մտանել . պատուել զծերս և զաղքատս : Եւ եթէ գտցի 'ի նոսա յայսոյիսի մեղանաց , ըսպանցին գործողքն մեղացն :

Եւ մինչ զայս ուսոյց հրեշտակն , ապա կոչեաց զանուն գլխաւորին Ղայան . որ և ասացաւ Չանկրղ Ղայան կամ Չանկրղ Խան : Եւ ասաց հրեշտակն տիրել 'ի վերայ բազում աշ-

խարհ
թիւ
խօսի :
Ե
պէս 'ի
ատեր
մում
արբու
գլս ա
նութե
և ազգ
բարկա
ձրս մ
բարկո
պահե
Առաջ
աղա թ
գրութի
Իսկ
թէ կա
երկրի .
վնացին
վորք
մին գ
Եւ

միայն
ընդ
ընդ
թիւն
յոյժ
նայն,
արիչն
մեծ
Աս-
ուոյ,
զուի
Չան-
ուա-
իբ-
նոցա
աու-
սլ է
սակ-
մի
զոք
Եւ
ըս-
կո-
սա-
Եւ
աշ-

խորհոյ և գաւառայ . և բազմանալ նոցա ան-
թիւ և անհամար բազմութեամբ . որ և եղեւն
իսկ :

Եւ կատարեցաւ ասացեալն 'ի տեառնէ , որ
պէս 'ի ձեռն մարգարէին ոպառնայր Աստուած
ասելով . թէ “ Բաժակ սակի է 'ի ձեռին ի-
մում Նաբուզոդոնոսոր , և ում կամիմ ,
արբուցանեմ զնա ” : Այսպէս և այլադէմ աղ-
գրս այս ոչ միայն բաժակ , այլ և միւր գաւ-
նութեան հասեալ 'ի վերայ մեր , վասն բազում
և ազգի ազգի մեզայ մերոց . զի զօրհանապազ
բարկացուցանեմք զարարիչն Աստուած 'ի գոր-
ծրս մեր : Վասն որոյ զարթոյց զոտսա տէր
բարկութեամբ առ 'ի խրատել զմեզ , վասն ոչ
պահելոյ մեր զպատուիրանս նորս :

ԳԼՈՒԽ Գ .

Առաջին դատերացմ թաթարաց ընդ Պարսիկս .
ադա ընդ Աջուանս և ընդ վիրս . և դիմա-
գրութիւն և երկայնակեցութիւն նոցա : Հրա-
ւանիութիւն Հայոց և վրաց :

Իսկ յորժամ իմացան այլադէմ ազգն այն ,
թէ կամք է Աստուծոյ տիրել մեզ 'ի վերայ
երկրի . ապա այնուհետեւ զօրաժողով լեալ ,
պնային 'ի վերայ Պարսկաց , և առին 'ի նոցանէ
փոքր քաղաք մի : Եւ Պարսիկքն զօրացեալ ա-
ռին գարձեալ զիւրեանցն և զնոցայն :

Եւ ապա գարձեալ ձայն ձգեցին յազգն

իւրեանց ուր և կային բնակեալ ազգն Ետողաց
և այլ Եւս դարձեալ յարձակեցան 'ի վերայ
Պարսից և յաղթեցին նոցա, և առին զքաղաք
և զամենայն ինչս նոցա :

Եւ 'ի վերայ այսր ամենայնի՝ դարձեալ հը-
րաման առ ին 'ի Ղանէն իւրեանց, որ կոչեցաւ
Չանկըզ Ղան, և յարձակեցան 'ի վերայ աշ-
խարհին Ազուանից և Վրաց :

Եւ զայս լուեալ Թադաւորն Վրաց զհամ-
բաւ գալոյ Տաթարին, ել ընդդէմ՝ նոցա վաց-
սուն հազար հեծելով 'ի դաշտն մեծ, որ կոչի
կոտման, որ կայ առաջի տերուենական բերդին:
Եւ յորժամ խմբեցաւ սպտերազմն, յայն ժա-
մբն ազդեցութեամբն սատանայի՝ որ հակառակ
է՛նա ճշմարտութեան՝ տէրն Մանասագոմոց Հա-
միդաւլայ անուն՝ յաղագոս քինու ինչ Ղատեաց
զձին Աթաբակ Իւվանէի, զի յայնմ՝ ժամանա-
կի մեռեալ էր Թադաւորն Վրաց Լաշէն, և
մնացեալ էր սմա որդի մի Դաւիթ անուն և
դուստր մի Բուուզուքան անուն, և անկեալ
էր Դաւիթն 'ի ձեռս Հոռոմոց Սուլթանին, և
կայր 'ի բանտի, և քոյր նորա Բուուզուքան
ունէր զԹադաւորութիւնն վերակացութեամբ
Իւվանէի, որոյ Աթաբակ անուանեցաւ :

Իսկ յորժամ Եհաս համբաւ գալոյ Տաթա-
րին ըստ վերագոյն ասացելոցդ, յայնժամ առ-
եալ Իւվանէ զհեծեալ Թադաւորութին Վրաց,
և եկն 'ի Գադ՝ առ մեծ և իմաստուն իշխանն
Վարհամ, որդի Պլու Չաքարէի, և առեալ
զնա զօրօք իւրովք գնաց ընդդէմ Տաթարին :

Եւ ա
զաջոյ
յարձ
ցաւ՝
դաւլա
Իս
զի եր
բացեա
և յան
Իս
առեալ
կոտոր
մինչեւ
կոտոր
խանն
Թեանն
Թողեա
մուրս
այս Ե
հարիւ
Եւ
էկն Տ
և յան
յերկի
Իս
Ղին Տ
էին իբ
րին էր
սլատմ
շու, ս

Եւ առեալ կորովի եւ մեծ իշխանն Վարհամ
զաջոյ թեւն , եւ Իւվանէ զձախոյ , եւ յորժամ
յարձակեցան 'ի միմեանս այս ոճիրս գործե-
ցաւ՝ (որ գրեցաւ) 'ի ձեռն անիծելոյն Համի-
դաւլայ :

Իսկ յորժամ ետես սղգն Նետողաց այսպի-
սի երկպառակութիւն 'ի նոսա , յայնժամ զօ-
րացեալ յարձակեցան 'ի վերայ Վրաց հեծելոյն ,
եւ յանխնայ կոտորեցին զնոսա :

Իսկ մեծ իշխանն Վարհամ տէրն Գաղայ
առեալ զաջոյ թեւն՝ մինչեւ յերեկոյն գնաց
կոտորելով զՏաթարն յանխնայ յարձակմամբ .
մինչեւ առ հասարակ լցաւ դաշտն Սադամոյ
կոտորեալ Տաթարով : Եւ ինքն Վարհամ իշ-
խանն Գաղայ լուաւ զկոտորումն թագաւորու-
թեանն . յայն ժամն մեծասպէս տրտմեալ եւ
թողեալ զգործ պատերազմին , դարձաւ յա-
մուրս բերդին իւրոյ որ կոչի Քարհերձ : Եւ
այս եղեւ 'ի թուականութեանն Հայոց վեց
հարիւր վացսուն եւ երեք :

Եւ յետ երկց ամաց անցանելոյ դարձեալ
եկն Տաթարն , եւ հառ զԳանձակ շահաստան .
եւ յանխնայ կոտորեաց եւ դերեաց , եւ դարձաւ
յերկիրն իւր բազում աւարաւ եւ գանձիւք :

Իսկ եթէ զինչ նմանութիւն ունէր առա-
ջին Տաթարն , ասացուք եւ զայն եւս : Զի ոչ
էին իբրեւ զմարդ առաջինքն , որ եկին 'ի վե-
րին երկիրն , այլ էին ահագինք տեսողաց եւ ան-
տրտմելիք . զի գլուխն մեծ էր իբրեւ զգամի-
շու , աչքերն ննզ իբրեւ զձագու , քիթն կարճ՝

իբրեւ զկատուի . գունչն՝ մուռնջ իբրեւ զշան, զուս
 մէջքն՝ բարակ զինչ մըջնան . ոտներն՝ կարծւոր զ
 զերթ խողի . մօրուս բնաւ խակ չունէին . տաւ
 լաթ ունէին զառիւծու . ձայնն ճշող զերդ ար
 ծուի . ուր չսրատէր , անդ գտանէր : Ամնայ
 քնն իւրեանց ունէին գգականի սուլուլի վե
 րանայի . ծածկեալ շարագուրով գրպակի . երե
 սրն լայն պեւեքի սպանմամբ դեղով ծեփէին .
 իժի նման ծնանէին , և գայոյ պէս կերակրէին :
 Մահն 'ի նոսա իսկի չերեւիւր . վտան այն՝ որ
 երեք հարիւր տարի ասրէին . այս ցեղ էին ա
 ռաջնքն որ եկին յաշխարհն վերին . և հաց ա
 մենեւին չուտէին :

Գարձեալ այլ եւս հրաման առեալ 'ի Ղա
 նէն , և եկին երեք գլխաւորք 'ի վերայ Աղ
 ուանից և Արաց , և առին բազում բաղաքս
 և բերդս , և էին անուանք նոցա միոյն Չա
 ւրման , երկրորդին՝ Բենալ , երրորդին՝ Մու
 լար . և եդեալ 'ի վերայ բերդերացն հիսար
 անհամար հեծերովք . և առին զառաջնն ըզ
 Շամբաւր հուպ առ Գանձակ . որ յառաջ ա
 ռեալ էին . առին զՍագամ , զՔարհերձ , զՏե
 րեւեն . զմեծ գղեկն Թագաւորանիստ . զԳարդ
 ման , զԵրբեւանքն , զՄծբնոյ բերդ : Առին և
 զործով զամուր գղեակի զՏաւուշ , որ էր աթոռ
 Սուլթանի . առին զտէրոււնականն և զնոր բեր
 դն . առին և զՔարն(1) մեծ վարդապետին բա

(1) Ա յն՝ յորում նարէր և ոստոյանէր , ուր խայր
 և էկեղեցի թ զարդարեալ : Ակրակոս .

զուս
 զոր
 կերտ
 սին ց
 ոսկիս
 շակե
 3
 իշխա
 տուե
 նաւ
 պեալ
 և խո
 զար .
 և տա
 զկոտո
 բեանց
 Մուղ
 Բուղ
 բին զ
 մանց
 բազու
 Ասոց
 րաց ,
 նուաճ
 3ա
 զխաւ

ւ զչանս զուժ ընչիւք 'ի լի . և տարան զինքն զփառա-
 ւ կարճ և որ վարդապետան մեր Վանական՝ ծառայ սչա-
 ւ տաւ . կերտօքն իւրովք : Իսկ երկիրն ամեն 'ի միա-
 րդ ար- սին ցաւակից լեալ , ետուն բազում դանձա և
 Վանայ) սակիս , և գնեցին զվարդապետան իւրեանց ա-
 լի վե- շակերտօքն :

Երե- Յետ այսորիկ յորժամ իմացան իմաստուն
 փէին . իշխանքն Հայոց և Վրաց , թէ Սասունաժ է
 փրէին : տուեալ զօրս թիւն և յաղթու թիւն 'եոցա աւ-
 սն՝ որ նաւ զաշխարհս մեր , սպա գործ և սէր կա-
 ին ա- պեալ , գնացին 'ի հնազանդու թիւն Տաթարին ,
 աց ա- և խոստացան տալ հարկս այսինքն մալ և թա-
 զար . և ինքեանք հեծելալ գնալ ընդ նոսա ուր
 և Ղա- և տանիցին . և հաւանեալ Տաթարին թողին
 Աշ- զկոտորումն և զաւերումն աշխարհին . և ին-
 սղաքս քեանք դարձան 'ի տեղիս իւրեանց յերկիրն
 2ա- Մուղանայ : Բայց թողին գլխաւոր մի Ղարա
 Մու- Բուղայ անուն , քակել զամենայն ամուրս երկ-
 իսար րին զոր առեալ էին . զոր և քակեցին 'ի հի-
 ն ըզ- մանց զանառիկ բերդսն զչինեալսն 'ի Տաճկաց
 2ա- բազում ծախիւք : Եւ այս այսպէս գործեցաւ :
 զՏե-

ԳԼՈՒԽ Դ .

Ասաց գիտաւոր , շերտաին յարձակումն թախա-
 րաց , եւ յետս կուչն յաւերեջոյ ցաշխարհս
 նուաճեալս . եւ բաժանումն աշխարհաց 'ի
 գլխաւորսն :

Իայ՛ Յաւուրս յայսօրիկ երեւեցաւ աստղ մի
 զխաւոր աւուրք ինչ . և դարձեալ ծածկեցաւ :

Նոյն և 'ի յոյս աւուրքս խաւարեցաւ արեգա- ծոյ ,
 կըն 'ի վեց ժամէ աւուրն մինչեւ չինն ժամն : աշխա
 Իսկ երեք գլխաւորքն որ ասացաւ առին վաստ
 գաշխարհն Վրաց և Աղուանից , և դարձան յեր. զայդ
 կիրն Սուղանայ , որ միշտ կանաչ լինի խամ Ե
 ամառն և ձմեռն վասն արարաբաւթեան երկ. րեկոյ
 րին և քաղցրութեան օդոն , և անդ կացեալ 'ի քո
 աւուրս լինչ , դարձեալ այլ եւս խորհեցան զերկ
 գալ 'ի վերայ բոխտանէից , աւ ոչինչ ունելով կեցաւ
 և համարելով զկոտորումն և զգերումն քրիս. և զկ
 տանէից յաշխարհէն Վրաց և Աղուանից : Որ նուեն
 և զԱնուանի քարն Եմեղայ առին . և բխւիք Ե
 բխբուց կոտորեցին 'ի նմա , որ և թիւ ոչ գայր նիայդ
 կոտորելոցն , և զազարսն գերեցին յամենայն զանն
 աշխարհէն անթիւ բազմութեամբ : Եւ սյառ և զե
 ոչ յադ. ցան . այլ դարձեալ խորհեցան գալ 'ի և զիւ
 վերայ երկրին , և առհասարակ կոտորել զամե. Ի
 նայն երկիրն :

Իսկ նախախնամութիւնն ամենակալին Առ. խորհե
 տուծայ ոչ աւնէ անտես զյուսացեալսն առ յանկ
 նա , զի անարժան խորհուրդս նոցա և զանի. խորհր
 բաւ նախանեաց , և զերկց գլխաւորացն՝ որ է առ
 ասացաւ , զերկուսն սատակեաց :

Եւ թէ զի՞նչ խորհեցան , ասացուք սա. մեզ տ
 կաւիկ : Երեկոյն արարին խուռուլթայ , որ ասի զայնսոյ
 ժողով , և խորհեցան կրկին եւս դատնալ 'ի ոչ տան
 վերայ կողեալ երկրին , և առհասարակ կոտ. տեղին
 րել , և զսյս ոչ երեքն միաբան խորհեցան , այլ ցեն ,
 և երկուքն : Իսկ Չաւրմանն բարի խորհրդով Ե
 ասէր 'ի հրամանէ նախախնամութեանն Աստու. կայ Չ

արևգաճոյ , բաւական լինել զաւերումն և զկոտորումն
 թամն : աշխարհի , ասելով թէ շէն մնան ասէ , զերկիր
 առին վաստակեն , եւ զկէսն մեզ տան զապրանացն
 ան յերկայդույ և զարտոյ , և կիտանն ինքեանք ապրին :
 և խօսան Եւ մինչ 'ի յոյս խորհուրդս էին , օրն եւ
 ան երկրեկոյտոցաւ և խաւառութայն խափանեցաւ և
 կայեալ 'ի քուն մնանէին , և մինչ լուսացաւ , տեսին
 քհեցան զերկուս գլխաւորսն մեռալ , որք զչարսն խորհ
 շնելով հեցան , և միւսն էր կենդանի որ զշնուութիւն
 քրիստոս և զխաղաղութիւն երկրին կամեցաւ , որոյ ա
 կց : Որ նունն էր Չաւրման :

Եւ ապա ելեալ Չաւրմանն վկայիք բա
 յիտպնաց առ մեծ գլխաւորն իւրեանց Չանկրզ
 աննայն Ղանն և սրտամեաց զամենայն խորհեալսն զիւրն
 և զերկուց գլխաւորայն , զնոցա սատակումն
 և զիւր կենդանի մնայն 'ի միում գիշերի :

Իսկ Ղայանն իբրեւ լուաւ , զարմայեալ ա
 սաց ցՉաւրմանն , այն զինչ երկու գլխաւորքն
 ն Աստուծոյ , շէր հաճոյ Աստուծոյ , վասն այն
 ն ապանկարծամահ եղեն : Իսկ դու վասն բարի
 զանի խորհրդոց քոց ոչ մեռար , զի Աստուծոյ կամք
 ցն՝ որ է առնուլ զերկիր և 'ի շնութիւն սրահել , և
 դնել ասախ կալ ընդ հրամանաւ մեր , և տալ
 մեզ տղղու և մալ և թողար և զփշուր : Իսկ
 ր ասի զայնասիկ որ ոչ հնազանդին հրամանաց մեր և
 ալ 'ի ոչ տան մեզ հարկ , զայնասիկ սպանանել և բղջ
 կատտեղին քակել : Որ այլքն որ լսեն և տեսանի
 , այլ ցեն , երկիցեն և ոչ արասցեն այնպէս :

Եւ զայս ասացեալ Ղայանն ասլա հրամայ
 տուեաց Չաւրմանին գնալ և սրահել զախտն իւր

զոր խորհեցաւ և ապրեցաւ 'ի մահուանէ : Եւ
ես զբարեմիտ կինն իւր զԱյլթանա խաթունն
Չաւրմանի, և անուանեաց զնա Չաւրմաղան :
Իսկ Չաւրմաղանն առեալ զբարեմէր և զչնոր-
հաւոր կինն Չանկըղ Խանին զԱյլթանա խա-
թունն, եկն նստաւ 'ի Մուղան, որ է ձմերոց
Տաթարին հանդերձ հարիւր և տասն զլիաւո-
րք :

Եւ ապա արարին խուռութայ և ժողով
մեծ հրամանաւ Չաւրմաղանին, և բաժանե-
ցին զերկիրս 'ի միմեանց վերայ հարիւր և տա-
սըն զլիաւորքն : Արարեալ ընդ երեք մասն
դաշխարհս, բաժին մի գնացին ընդ հիւսիսոյ
կողմն, և բաժին մի ընդ հարաւ, և բաժին մի
ընդ մէջ երկրիս, որ այժմ ունին գեռ եւս :

Իսկ անուանք զլիաւորացն որ 'ի մէջ երկի-
րս մնացին, են այսոքիկ . Ասութու նուինն .
որ էր ոսկր Ղանին . Չաղատայն՝ որ Ղան կոչե-
ցաւ, և յետոյ Սանիթայ, միւս այլ փոքր Չա-
ղատայ . Բաչու նուինն, որ գրին զլուխ ամե-
նայն զօրացն . Ասար նուինն, խութթու նու-
ինն, Թութտու նուինն . Աւգաւթայ նուինն
խոջայ նուինն . Խուռու մշի նուինն, Խունան
նուինն . Թենալ նուինն : Անգուրագ նուինն :

Նոյնպէս և այս երեքտասան զլիաւորքս
բաժանեցին 'ի միմեանց վերայ զերկիրն Աբսոց
և Աղուանից լեաւնով և դաշտով, և զմեծ
տուն Չաւրմաղանին բերին 'ի Քանձակ շա-
հաստան, որ զառաջինն աւերեալ և յետոյ այլ
չինեցաւ :

ԳԼՈՒԽ Ե .

անէ : Եւ
աթուհի
բմազան
և զնոր
նա խա
ձմերու
շխաւու

Հարկատուութիւն իշխանացն Վրաց և Աթուրանից . և Վանական վարդապետ Հայոց :

Իսկ մեծ և անհարկ իշխանքն Վրաց և Աթուրանից եղեն ընդ հարկաւ նոցա՝ որ կամաւ ժողով և որ ակամայ . և տային անխափան զամենայն աժանեաց ահմանեալ հարկսն , զոր յառաջագոյն գրեալ և տաքար . և ինքեանք ըստ ուժոյ և ըստ կարողութեք մասնական իւրեանց հեծելովք գնային ընդ նոսա իւսիսոյ՝ ի խալան . և առնուին զոչ հնազանդեալ քառաթին միզաքս և զբերդս աւերելով և գերելով , և կուտեն : Եւ որ ելով անխնայ զարս և զկանայս , զքահանայս զերկի , և զկրօնաւորս , գերելով զսարկաւազուհանս՝ ի ուրինն ծառայութիւն իւրեանց . կողոպտելով զեկե , ն կոչեղեցիս քրիստոսնէից աներկեղաբար , և զպատար Չառական նշխարս սրբոց և զկտաչս և զգիրքս ս ամեմերկայուցեալ ի զարդուց , առ ոչինչ համաւնուրեալ ձգէին ընդ վայր : Եւ արդ՝ զոր աղէտ և նուրինն զպատահումն ժամանակիս գրեցից , զբաժանումն ունան մին հարց և մարց ի յորդուցն , թէ զսիրելէինն : Եւ զմերձաւոր ընտանեաց զխափանումն ուորքս սիրոյն , զիւրեանց սեպհական ընչիցն առնումն , Վրաց թէ զգեղեցիկ սպարանոցն ի հրոյ ծախումն . զմեծ զմանկաւոյն ի գիրկս մարցն զենումն , թէ զգեղեցիկ և զխափանումնդ երիտասարդաց և ըզկուսից բոկ և մերկ գերումն :

Ասյ անցաւորիս . կարծեմ թէ ամենայնն

յիմնց պարտեացն հանդիպեցաւ . զոր տէրն և արարիչն մեր . այն որ ներսդ է և երկայնամիտ այց արասցէ հօտի իւրոյ , զոր դնեաց պատշաւական արեամբն իւրով :

Յայտմ'ի նեղ և 'ի դառն ժամանակիս փայլեր իբրեւ զարեգակն սուրբ հոգի վարդապետն մեր Վանական յերկիրն արեւելեան . երկրորդ արեւելք անուանեալ լիլուսով և անհաս դիտութեամբ ամենիմաստ Հոգւոյն սրբոյ . զոր և բազում երկամբք և աշխատութեամբ ճրի բաշխէր զկերակուրն հոգեւոր , այսինքն զբան վարդապետութեան Հոգւոյն , նմանեալ երկնաւոր վարդապետին Քրիստոսի հեղութեամբ և խոնարհութեամբ , լուսութեամբ և երկայնամտութեամբ : Սիրող սրբոյ և սրբութեանց խաչի և եկեղեցւոյ . ժամանակեաց և ժամարարաց , քահանայից և կրօնաւորաց : Առ մեծամեծն՝ ահարկու . սու աղքատն և կարօտեալն՝ քաղցր , առ մեղուցեալն՝ անխօսկալ , դնելով ըզդեղ ապաշխարութեանն թեթեւագոյնս , որպէս զի կարող լինիցին տանել զլուծ ապաշխարութեանն , և վերտաին նորոգել հոգւով եւ ժարմնով , և կալ հաստատուն 'ի հաւատոս ճշմարիտս , փառարանիչս և երկրպագուս ամենասուրբ Երրորդութեանն :

Նոյնպէս և գովելի աշակերտքն իւր Վարդան և Կիւրակոս , Առաքեալն և Յովսէփ խաչանման բաժանեալ զաշխարհն արեւելից լուսաւորեցին կենարար վարդապետութեամբ Հոգւոյն սրբոյ : Այլ և բազում որդիս 'ի փառս

տէրն և ամին ձրի բաշխելով զտիրական և զխաչանիչ
յնամիագաւազանն նմանեալ փառաւոր վարդապետին
պատը իւրեանց , կատարելով զտեառն հրամանն թի
« Չրի առիք և ձրի տուք » . զոր և զկեանս նա
իս փայցա տայն Եկեղեցւոյ իւրոյ Բրիտանոս Աստուած
դապե . ընդ երկայն ժամանակս . ամէն :

ԳԼՈՒԽ Զ .

Պատերազմուեք և աներածք Բաչու Կուինին
'ի կարնոյ բացաք և 'ի հոռոմս] :

Ի վեց հարիւր յութսուն և ութ թուին
Հայոց զօրաժողով լեալ Բաչու Կուինն գլխաւո
րն հաթարին , եկն 'ի վերայ կարնոյ քաղաքի
անթիւ բազմութեամբ . և ամեալ 'ի հեօար
զամիսս երկու , առին , և յանինայ կատարեցին
և աներեցին զբարելի և զգեղեցիկ քաղաքն .
Նշնայն և զվանորայս երկրին և զհրաշալի ե
կեղեցիան անմարդաբնակ արարին գերելով և
աւերելով : Արոյ Հայոց և Արաց իշխանքն
աւեալ բազում գրեանս տօնական և մարտի
բողէք , առաքեալ և ընթերցուած , դորձք և
տակեղիր աւետարանք անմման փարթամութի
զարգարած 'ի շինութիւն և զարդ որդւոց նոր
Սիօնի , ուստի առեալ տարան յաշխարհն ա
րեւելից , և լցուցին զվանորայս ամենայն զար
դուք Եկեղեցւոյ : Եւ 'ի վերայ այսր ամենայ
նի զկնի միոյ ամի անցանելոյ , դարձեալ այլ
եւս զօրաժողով եղն ազգն Նեառղաց հան

դերձ Հայոց և Վրաց իշխանօքն , և եկին 'ի վերայ աշխարհին Հռուսնոց անթիւ բազմութեամբ :

Եւ դիտաւորն զօրուն Բաչու նուինն յաջողեալ էր 'ի գործ պատերազմի . ուր և հանդիպէր ընդդիմանալեացն իւրեանց , բազում յաղթութիւնս առնէր . բայց պատճառ յաղթութեանն էին Հայոց և Վրաց իշխանքն , որ լինէին երեսք զառաջինն , և ուժգին բախելով 'ի թշնամիս յարձակէին . և ապա զկնի նոցա Տաթարն նետիւ և աղէզամբ :

Իսկ յորժամ մտին յերկիրն Հռուսնոց ելաւ ընդդէմ նոցա Խիաթադին սուլտանն հարիւր հազարօք . և վաթսուն հազարօք , և էր որդին մեծին Շալուէի առ Սուլտանն 'ի վաղուց ժամանակաց : Եւ յորժամ կազմեցան 'ի գործ պատերազմին՝ հանդիպեցան զօրք Տաթարին և որդին Շալուէի հանդէպ միմեանց 'ի ձախոյ թեւն . և մեծոյ յաղթ իշխանքն Հայոց և Վրաց ընդդէմ Սուլտանին զօրացն յաջոյ թեւն : Եւ յորժամ սասակացաւ մարտն , քաջ և անուանի որդին Շալուէի դարձոյց զՏաթարն , և զբազումս կոտորեաց 'ի նոցանէ :


Իսկ Վրաց իշխանն Տէրն Գաղայ , որդին մեծին Վարհամայթուսն զու Չաբարէի Աղբուղայ անունն , քաջապէս մարտուցեալ ընդդէմ զօրս Սուլտանին , հանդերձ այլ ազատագունդ զօրօքն Հայոց և Վրաց որք ընդ նմա , և դարձուցեալ զաջ թեւ զօրաց Սուլտանին , բազումս միրայից և մեծամեծաց զլուսս հատեալ , յոյժ

եկին Վարամեցուցին զՍուլտանն : Եւ օրն երեկոյա-
ազմուցեալ թողին զգործ պատերազմին և բանակե-
ցան հանդէս միմեանց 'ի մէջ դաշտավայր տե-
նն յաղեացն . որ կայ ընդ մէջ Ապրնոյ քաղաքի և
և հանճրղնկային :

ազում Իսկ ընդ լուտանալ միւս այլ աւուրն զու-
յաղաքեցան զօրքն Տաթարին և Հայոց և Վրաց զը-
քն , ոյնալ ընդդէմ Սուլտանին 'ի պատերազմ : Եւ
բախեցրօքն բազմութեամբ ձիաթող եղեալ 'ի վերայ
նի նա բանակի Սուլտանին դնացին . և յորժամ հասին
'ի տեղի բանակին , այլ ոչինչ գտին , բայց միայն
ոց եղբրաննին բազում ուռնկօք լցեալ . և զվրան
հարձակուանն տեսին բազում գանձիւք զարդար ,
և էրեալ ներքոյ և արտաքոյ , և գազանք կապեալ
ի վախնձ առիւծ և յովազ առ դուրս վրանի Սուլ-
տան 'իտանին , քանզի 'ի գիշերին յայնմիկ փախուցեալ
սթաւի Սուլտանն ամենայն զօրօք իւրովք յերկմը-
ոց 'ի տութենէ ամիրայիցն , որ կամէին հնազանդել
Հայոց Տաթարին :

յաջոյ Եւ տեսեալ Տաթարին զփախու սո Սուլտա-
քաջ նին , կացուցին սակաւ մի 'ի զօրացն պահապա-
թաւնքս զգուշութեամբ 'ի վերայ վրանիցն ստերով
թէ խաբէութիւն ինչ է : Եւ այլ բազմութիւն
ողին զօրացն արձակեցան զհետ Սուլտանին , և ոչ
բուկարացին ըմբռնել զոք , զի յամուրս երկրին
օրու իւրեանց հասեալ էին : Իբրեւ գիտացին եթէ
զօստոյդ փախուցեալ է Սուլտանն Հոռտնոց դար-
ձու ձան յետս զօրք Տաթարին , և առին զամենայն
Բաւ ուռնիկս և զկարասիս նոցա , հանդերձ մեծա-
ոյժ մեծ գեղեցկաբանդ վրանօքն զոր թողեալ էին

առ ահի Տաթարին , և ինքեանք վախուցեալ :
 Եւ ապա 'ի վաղիւն ուրախութեամբ մեծաւ
 յարձակեցան 'ի վերայ աշխարհին Հառունց .
 առին զԵրզնկան յառաջագոյն , և թողին Շա-
 հնայ : Առին զԱրտարիայ և բազում արիւնհե-
 ղութիւնս արարին 'ի նմա , վասն ոչ տալոյ ըզ-
 քաղաքն . այլ կային բնդդէմ Տաթարին կռուով
 վասն զի բազում հեծեալ կայր բնակեալ 'ի նը-
 մա լցեալ ամենայն բարութեամբ , և ոչ տային
 զքաղաքն սիրով : Կսկ խորամանկ զօրք Տաթա-
 րին ջան եղեալ առին խաբէութեամբ , և առ-
 հատարակ կատրեցին զմեծամեծան , և զփոքուն ,
 ողն գերեցին յանխնայ ամենայն բնչիւք իւրեանց :
 Եւ դարձեալ առին զԱօն և զԱխշարն հան-
 դերձ մեծամեծ գեղօք և վանորայիւք : Եւ ա-
 պա յարձակեցան 'ի վերայ Աւաստայի և գործով
 առին զնա . բայց ոչ կատրեցին զնա . այլ ա-
 ռեալ աւար զինչս նոցա , և զմարդիկն հա-
 մարեալ եգին հարկս 'ի վերայ նոցա ըստ սովո-
 րութեանն իւրեանց մալ և թաղար . և թողեալ
 Շահնա և գլխաւորս երկրին Հառունց , և ին-
 քեանք գնացին բազում աւարաւ և գանձիւք
 և դերեօք , զոր առին յաշխարհէն Հառունց
 յերկիրն արեւելից 'ի բնակութիւնս և յարդ-
 գահս իւրեանց :



խորհո
 ար
 Խ
 ւորն Հ
 տութ
 ծառա
 մտեալ
 զանգե
 և ոչ թ
 բխատն
 բարին
 զԲաշո
 տատեց
 և աղա
 գաւոր
 պատ ս
 նատեալ
 թեալ
 Սային
 բեանք
 նեցին
 իւրեան
 Եւ
 Ղանն
 թեան
 ըսովի և
 պարապ

ԳԼՈՒԽ Է •

Խորհուրդ եւ հարկատուութիւն բարեղաչա
արբային Հայոց Հեթմոյ՝ Թաթարաց :

Իսկ բարեպաշտ եւ քրիստոսասպասկ թաղա-
ւորն Հայոց Հեթում հանգերձ ամենայն իմաս-
տութեամբ լրեալ հարբն իւրով եւ աստուա-
ծապահ եղբարքքն եւ իշխանօքն ՚ի Խորհուրդ
մտեալ հաստատեցին ՚ի միտս իւրեանց հնա-
զանգել Տաթարին եւ տալ հարկս եւ խաղանս ,
եւ ոչ թողուլ զնոսս յաստուածաշէն եւ ՚ի բը-
րիատանէ աժողով երկիրն իւրեանց . զոր եւ ա-
բարին իսկ : Ասան զի յառաջագոյն տեսին
զՔաչոյն զգլխաւորն զօրաց Տաթարին , եւ հաս-
տատեցին գաշկնս սիրոյ եւ հնազանդութեանն .
եւ ապա զինի այնորիկ առաքեցին զեղբայր թա-
ղաւորին զասպարապեան Հայոց զպարոն Սըմ-
պատ առ Սային Ղանն (Հահին խանն) , որ էր
նստեալ ՚ի յաթու Չանկըզ խանին : Եւ եր-
թեալ ըստ յաջողեցն Աստուծոյն ետես ըզ-
Սային Ղանն այն յոյժ քրիստոնէասէր եւ բա-
րեսէր : Ասան այնորիկ ազգն իւրեանց անուա-
նեցին զնա Սային Ղան , որ է ըստ լեզուին
իւրեանց աղէկ եւ ըստ Ղան :

Եւ տեսեալ զասպարապեան Հայոց Սային
Ղանն , յոյժ ուրախացաւ զասն քրիստոնէու-
թեան հաւատոյն , եւ եւս առաւել զասն կո-
րովի եւ իմաստուն բանիցն՝ զոր խօսեցաւ առ-
պարապեան Հայոց Սիբատ առաջի նորս , եւ

եւալ :
ծաւ
մոյ .
Հա-
նէե .
ըզ-
ւով
նը-
ային
Թա-
առ-
ուն-
նոց :
ան .
ա-
ով
ա-
հա-
վա-
ալ
ին-
ւթ
նոց
դ-

որարեալ զնա սղամիշ , և տուեալ մեծ խաւ-
 լախ և փայլղայտ սակիս եւ Տաթար խաթուն
 պաւխտախաւօր , զի այն էր նոցա մեծ սէրն ,
 որ զով սիրէին եւ մեծարէին , տային կին 'ի
 սրատուաւօր կանանցն իւրեանց , և այսպէս մեծ
 մեծարանօք սրատուեալ զսպարասէան շայոց ,
 յուզարկեաց յաշխարհս իւրեանց առաջի քը-
 բխտաստպօակ թագաւորին շայոց Հեթմոց .
 հրամայելով նմա գնալ առ ինքն և տեսանել
 զնա : Չոր տեսեալ բարեպաշտ թագաւորն
 Հեթում զսպարան եղբայրն իւր զՍմբատ այն-
 պիսի պատուով պատուեալ և մեծարեալ 'ի
 Ղանէն , յոյժ ուրախացաւ յարախաւթիւն
 մեծ , եւս առաւել ընդ դրեալսն վասն սղա-
 տաւթեան երկրիս և վանսրայցս եւ ամենայն
 քրիստոնէից :

ԳԼՈՒԽ Ը .

Դարձ եւ Թագաւորութիւն արքայորդւոյն
 Վրաց Դաւթի 'ի կաղանաց ջանիւք Վարհա-
 մայ հրամանու մեծի Ղանին :

Իսկ քաջ և անուանի զօրքն Վրաց ոչ ու-
 նէին գլուխ թագաւոր իւրեանց 'ի վաղուց
 հեաէ , և գուսարն Լաշային Ուռուզուքան մա-
 հուամբ փոխեցաւ յաշխարհէս , և Վիրք մնա-
 ցին անաւերունչք իբրեւ զհօտս , որոց ոչ իցէ
 հովիւ : Ապա 'ի նախախնամութենէն Աստու-
 ծոց ընդ միտ արկեալ զօրդին թագաւորին իւ-

րեանց
 և ընդ
 մոց ի
 էր գէ
 հարցո
 թայ .
 գանխ
 կին 'ի
 'ի հօր
 Ե
 նայն
 պտերն
 այլ ա
 պինի
 իւր ձ
 սիասս
 դտան
 Դաւթ
 Աստու
 բանտ
 իշխան
 դանու
 Ե
 երկայն
 բաւ և
 տու.թ
 Ե
 հանդե
 վարս
 արժա

խառ-
սթուէն
տէրն,
կին 'ի
ս մեծ
այոց,
'ի քը-
թմոց,
ամենէ
ուորն
այն-
ալ 'ի
թիւն
աղա-
հայն

ւոյն
բնա-

ու-
լուց
մա-
նա-
իցէ
ու-
իւ-

րեանց զՂաւիթ որ էր 'ի բանտի 'ի Հոռոմք .
և ընթանեալ արս գլխաւորս 'ի զօրացն Հոռո-
մէրն , մոց իշխանքն Վրաց , ապրան առ Բաշոյն որ
կին 'ի էր գլխաւոր Տաթարին , և ետուն չարչարանօք
ս մեծ հարցանել զնոսա վան թագաւոր որդւոյն Ղաւ-
այոց , թոյ , և 'ի նեղելն զնոսա հարցումք և սաստիկ
'ի քը- գանիւ , որպէս սովորութիւն է Տաթարին , ե-
թմոց . կին 'ի խոսա , և սապին թէ կայ յերկաթ և
ամենէ 'ի հորի 'ի Աեօարիա :

Եւ ապա յոյժ ուրախացեալ Վրաց իշխա-
նայն աւաքեցին զիմաստուն իշխանն Վարհամ
ալ 'ի զտէրն Չաբայ հրամանաւ Բաշոյն նախնին և
թիւն այլ ամենայն գլխաւորաց Տաթարին , և ետուն
աղա- զինի Վարհամայ Տաթար գլխաւոր մի այլ հար-
հայն իւր ձիաւորով . և յազարկեցին զնոսա մեծ
սխառութով 'ի Աեօարիա : Եւ իբրեւ զնային ,
զտան կամօքն Աստուծոյ զթագաւոր որդին
Ղաւիթ 'ի մեծ և 'ի խոր վերապի . իսկ կամքն
Աստուծոյ սրահեալ էր զնա կենդանի 'ի խոր
բանտին . և իբրեւ տեսին զօրք Տաթարին և մեծ
իշխանն Վարհամ 'ի հիացման եղեալ վան կեն-
դանութեան նորա , ետուն փառս Աստուծոյ :

Եւ էր Ղաւիթ որդի թագաւորին Վրաց
երկացն հասակաւ և կորովի , գեղեցիկ պատկե-
րաւ և թուխ մօրուօք , լցեալ ամենայն իմաս-
տութեամբ և շնորհօքն Աստուծոյ :

Եւ ապա հանեալ 'ի բանտէն , ազուցին նմա
հանդերձս պատուականս , և հեծուցեալ յերի-
ւարս առին և զնային յաշխարհն Վրաց : Եւ
տրժամ հասին 'ի քաղաքն Տիֆլիս , լուծ ուսա-

խօսցան իշխանքն Վրաց, և առեալ հրամանն ՚ի
 Բաշոյն նա ինէն և յԱյլթանա խաթաւնէն Չա-
 ւրմազանին (զի ընդ այն առաքա մեռեալ էր
 Չաւրմազանն և կիմն ունէր զզանաթիւնն), որ
 և ա հրաման և հեծեալ զինի մեծ իշխանին Վար-
 համոյ, և առաքեաց առ մեծ Ղանն : Եւ զը-
 նացեալ օգնութեամբն Աստուծոյ և տեսեալ
 զՂանն, սրաամեցին զեղեալ իրան վասն թագաւոր-
 րորդւոյն, և առին հրամանն ՚ի մեծ Ղանէն, բե-
 րին նասուցին զԴաւիթ յաթաւ հօրն իւրոյ ՚ի
 Տփլիս : Եւ իշխանքն Վրաց յոժ ուրախացեալ
 անուանեցին զնա Վարհամուր թագաւոր, այ-
 սինքն Վարհամէզիւր թագաւոր : Եւ առ ժամա-
 նակ մի խաղաղացաւ երկիրն Վրաց և Աղս ա-
 նից վասն նոր թագաւորին նստելոյ :

ԳԼՈՒԽ Թ .

Մահ Չաւրմազանին : Տ. Կոստանդին կաթաւ-
 քիս և Հոյոց : Գարոն Կոստանդին նախկին թա-
 գաւոր Հոյոց հայրն շէթմոյ : Դաւիթ ար-
 բայ Վրաց մասնի յիշխանացն իւրոց : Մեռա-
 նի Վանական շարգադեա :

Իսկ Չաւրմազանն մեռաւ բարի խորհով,
 և եթող երկուս որդիս յԱյլթանա խաթաւն
 կնօջէ իւրմէ, անուն միոյն Սիրամուն, և երկ-
 րորդին՝ Բաւրայ : Եւ էր Սիրամունն բարի ՚ի
 մանկութենէ իւրմէ սիրող քրիստոնէից և ե-
 կեղեցւոյ, և կամօքն Աստուծոյ յաջողեալ ՚ի

գործ
 թեան
 յեա
 իսկ ե
 իւրոց
 Յ
 և առ
 կան
 հանդ
 թում
 ւաստ
 ցիս շ
 և յա
 Ի
 հանդ
 իշխան
 ազգե
 պահէ
 պաշա
 զշէթ
 զաւա
 Ի
 րաց Դ
 ւորու
 ՚ի զին
 Տփլիս
 ուրախ
 բութի
 և մեծ
 Իս

նն ՚ի
Չա.
ալ էր
) , որ
Վար.
ւ գը.
սեալ
աւս.
երե.
րոյ ՚ի
ցեալ
այ.
ամս.
ու ա.

Սա.
Թա.
ար.
ւա.

ալ .
ուն
րկ-
՚ի
ե-
՚ի

գործ պատերազմի օ մինչ զի վասն կարի քաջու-
թեանն՝ Ղաներն Ոսկի գլան անուանեցին զնա
յետ բազում յաղթութեանց և պատերազմաց
Իսկ եղբայր նորին վասն չարութեան բարուց
իւրոց սպանաւ ՚ի Հուլաւու Ղանէն :

Յայտմ ժամանակի հանդիսանայր պայծառ
և աւարիկի վարուք հոճոյ Աստուծոյ և մարդ-
կան Տէր Աստուծոյն կաթուղիկան Հայոց ,
հանդերձ քրիստոսասպակ թագաւորաւն Հե-
թումաւ . որ և լուսաւորեցին ուղղափառ հա-
ւատով և պայծառ կարգօք զամենայն եկեղե-
ցիս Հայաստանեայց յարեւելս և յարեւմուտս
և յամենայն տեղիս :

Իսկ թագաւորահայրն պարսն Աստուծոյն
հանդերձ այլ աստուածատուր որդւովքն եւ
իշխանօրն կայր վառեալ ընդդէմ զօրաց այլ
ազգեսացն և թշնամեաց խաչին Քրիստոսի . և
պահէին յուրախութիւն հանապաղ զբարե-
սրաշա և զքրիստոսասպակ թագաւորն Հայոց
զՀեթում . հանդերձ զեղեցիկ և սրատուական
զաւակօքն իւրովք Վեւնիւ և Թորոսի :

Իսկ բարեսէր և գեղեցիկ թագաւորն Վը-
րաց Գաւրթ հանապաղ իւր ամենայն թագա-
ւորութեամբն կայր ՚ի մեծ ուրախութեան եւ
՚ի գինարբուս յիւր թագաւորանիտ քաղաքն
Տփլիս : Եւ յաւուր միում էր մեծ ճաշ եւ
ուրախութիւն աւաջի թագաւորին . և սովո-
րութիւն է Վրաց հանապաղ ամբարտաւանել
և մեծամեծ բանս իստել :

Իսկ մի յիշխանացն Վրաց համարեաց ա-

ուաջի թագաւորին զայլ իշխանան և սոսոց զթիւ
իշխանացն հազար : Եւ կայր յիշխանացն՝ որ
ուենէր հազար ձիաւոր պատերազմող , կայր՝ որ
ուենէր հինգ հարիւր , և անկաւ բանս այս ՚ի
լուր ամենայն թագաւորու թեանն , յորժամ էին
անաւշացեալ յուտել և յըմպելն : Եւ յորժամ
հաշուեցան (և համար արարին զօրացն Հայոց
և Վրաց՝ սոսոցին զիւրեանցն յաղթող լինել ՚ի
վերայ զօրաց Տաթարին , և բաժանեցին ըզ
գլխաւորսն ՚ի վերայ իւրեանց . և այս ոչ թէ
ուզորդ խորհեցան և կամ խօսեցան , այլ աւ
կատականս , զի պարտաւ և անհոգ էին ՚ի ցա
ւոց , և այլ թշնամի ոչ դոյր յերկիրն արեւե
լից , բայց միայն Տաթարն , որ յամենայն ժամ
դային և հարկաւ նեղացուցանէին զՎրաց և
զՀայոց իշխանքն , յամանց ուղէին սակի՛ կտաւ .
յամանց՝ բողայ , յամանց՝ աղէկ շուն և ձի , և
այդպէս նեղացուցանէին զնորս զտաւ ՚ի մալէն
և ՚ի թաղարէն և ՚ի խալանէն , վասն այնորիկ
խօսեցան զայդ , բայց ոչ ուզորդ , այլ ընդ իաւ
ղըս և ընդ կատակս :

Իսկ մի ոմն յայնցանէ որ անդն կային , նմա
նեալ Յուդայի մասնչին , դնաց և մասնեաց
Տաթարին , զսուտ բանն իրաւ և ուզորդ դար
ձուցեալ այսպէս ասելով . թէ Վրաց թագաւորն
և իւր իշխանքն խորհեցան դալ ՚ի վերայ ձեր :

Իսկ նոցա աւատացեալ սուտ բանին , դար
ձան ՚ի վերայ աշխարհին յաւարի աւետալ զա
մենայն ինչս և զխաշկնան , բայց զմարդիկն ոչ
կատորեցին աւանդ համանի մեծ Ղանին , և

այս զթիւմբնսն զթագաւորն և զամենայն իշխանքն
նայն՝ որպէս, մինչ ՚ի յայն որ զմեծ իշխանն Արայ զոր-
կայր՝ որքի Աթաբակ Իւվանէի Աւագ անուն, տարան
այս ՚առ դուրս գլխաւորին դագաղօք . զի ընդ ա-
համ էր լուրսն ընդ այնոսիկ հիւանդացեալ էր և ոչ կա-
յորժամքեր նստիլ ՚ի ձիոյ : Եւ թէպէտ այլ իշխանքն
ն Հայոց և թագաւորն շատ խօսեցան, ոչ աւատացին
լինել ՚ի սօսից նոցա . և ՚ի դերեւոյ և յաւարեւոյ զաշ-
խարհն ոչ դագարէին : Եւ յորժամ տարան
ուչ թէ զԱւագն դագաղօք ՚ի դուռն գլխաւորաց Տա-
այլ առ թարին, ապա նորա խօսիցն աւատացեալ թո-
՚ի ցաւ զացուցին զաշխարհն ՚ի կոտորեւոյ, և արարին
սրբէւե խաղաղութի սրտաբէկ և ողորմելի քրիստոնէիցն :
նս ժամ Ընդ աւուրսն ընդ այնոսիկ փոխեցաւ ՚ի
րաց և Քրիստոս աւագ և փառաւոր վարդապետն
՚կտաւ մեր Անուականն, և սուգ մեծ եթող մեզ . և
ձի . և ոչ թէ միայն մեզ աշակերտելոցս նմայ, այլ և
ն մայէն ամենայն աշխարհիս . որոյ յիշատակն նորա
այնորիկ օրհնութեամբ եղիցի . և աղօթք նորա ՚ի վերայ
ուչ իսաւ ամենայն աշխարհի և ամենայն քրիստոնէից :



նմա
տնեաց
դար
աւորն
ձեր :
դար
ու զա
կն ոչ
ին . և

ԳԼՈՒԽ Ժ .

Մարտի: Գջիսհամար յարեւելս: Հեթում ար-
քայ Հայոց գնայ առ Մանկու Ղանն, եւ մե-
ծարի դատուող: Եւթն որդիք եւթն Ղանաց:
Խուշ ամբարտաւան: Տ. Ստեփաննոս Չանու-
հայր Գերեթնի վանաց մարտիրոսանայ: Հի-
ւանդանայ խուշ. եղեւնագործութիւնք 'ի դատ-
ճառս նորա: Յաջորդէ ջխուշ Միջան որդի նորա:

Իսկ 'ի յաւուրսս յայսօսիկ եկն մարտիս սաս-
տիկ և եկեր զամենայն աշխարհն արեւելից .
մինչեւ առհասարակ երկիրս ամենայն յարե-
ւելք և յարեւմուտք 'ի յահէն զարհուրեալ
Աստուած ապաւինեցան մեծաւ հառաչանօք .
և ապա ողորմութեամբն Աստուծոյ զերծաւ
աշխարհ 'ի յահագին ցամանէն . և ետուն
փառս Աստուծոյ ամենակալին փրկողին յայն-
պիսի պատուհասէն: Եւ այս եղեւ 'ի թուա-
կանութեանս Հայոց յեւթն հարիւրն (1251):

Եւ զկնի ցամանա այսորիկ եկն գլխաւոր
մի Տաթար Արղուն(1) անուն հրամանաւ Մանկու
Ղանին . և համարեաց զերկիրն արեւելից վա-
սրն հարկի . և առնուին այնուհետեւ զհարկն
'ի գլխաթուոյ մարդկանն , քանի որ գրեալ լի-
նէր 'ի դաւթարն (2) . և այսպէս այլ աւերեցին
զաշխարհն արեւելից . զի 'ի մի փոքր գեղն յի-
սուն մարդ համարէին , կամ երեսուն . 'ի սասն

(1) Մի օր . Արղուն: (2) Տօմար :

և հի
մինչ
համ
որ զ
կապ
ւազ
արոր
մար
ցուց
զուի
ւոր
Ի
գաւ
նայն
աշխ
տուն
կրիս
Ղան
պիսի
Ղան
նէն
կիս
նորա
ուրա
Ի
նին
յարե
որդէ
զուս
նոցս

մ ար-
ել մե-
անաց:
Չանա-
: Հի-
դաւ-
նորա:
աս-
ելոյ .
յարե-
րեալ
անօք .
ոճաւ
տուն
յայն .
ուա-
1) :
ուոր
նկու
վա-
սրկն
լ լի-
նցին
յի-
ան

և հինգ տարեկանէն 'ի վերն զամենն համարէին մինչ 'ի վացսուն տարեկանն . և յամէն զլսոյ որ համարէին, վացսուն սպիտակ առնուին . և թէ որ վախչէր կամ թաքչէր, յորժամ ընթռնէին կապէին անողորմ ձեռս 'ի յետս և դալոր դաւազանօք ծեծէին . մինչ զի մարմինն ամենայն տրորէր և յարենէն շաղախէր . և սպա անողորմաբար զկատաղի շներն իւրեանց, զոր սովորեցուցեալ էին սւաեղ միս մարդոց, 'ի ներս թուղուին և ուտել տային զտառ ապեալ և զչունեւոր քրիստոնեայսն :

Իսկ քրիստոսապաակ և բարեպաշտ թագաւորն Հեթում, իբրեւ լուաւ զայս ամենայն բարկութիւնս որ դործեցաւ 'ի վերին աշխարհն արեւելոց, սպա վասն սիրոյ քրիստոնէից եւս առաւել վասն իւր սեպհական երկրիս, գնաց բազում գանձիւք առ Մանկու Ղանն, և հոգաց չթողուլ յերկիրս իւր զայսպիսի բարկութիւնս : Եւ յորժամ հասաւ առ Ղանն, կամօքն Ատուծոյ մեծարեցաւ 'ի Ղանէն : Եւ արարեալ Ղանն մեծ պատիւ և հարկիս թագաւորին Հայոց, և զամենայն բանն նորա հոգաց ըստ կամաց նորա . և դարձոյց մեծ ուրախութեամբ յաշխարհն իւր :

Իսկ զինի այսորիկ և հասանելոյ թուախանին Հայոց յեւթն հարիւր և 'ի վեցն, եկին յարեւելոց ուստի մեծ Ղանն էր՝ եւթն Ղանի որդիք, ամէնն դուժան մի հեծելով, և մի դուժանն էր երեսուն հազար : Եւ են անուանք նոցա այս, առաջին և մեծն 'ի նոցանէ Հոյլա,

ու . որ էր եղբայր Մանկու Ղանին . երկրորդ
 խուլն՝ որ և զինքն եղբայր Աստուծոյ ասէր և
 ոչ ամաչէր . երրորդն՝ Բալախէն . չորրորդն՝
 Տաթարն . հինգերորդն՝ Թագու գարն . վեց-
 երորդն՝ Ղատաղանն . եւթներորդն՝ Բաւ-
 բաղանն . և էին սոքա անհնազանդք միմեանց
 և յոյժ աներկեղք և մարդակերք : Իսկ ՚ի գալն
 որ եկին ամենն կառօք եկին , և կառօք շքե-
 ին . մինչ զի զլեառն և զբլուրս հարթէին աշ-
 խարհոյն արեւելից վասն հեշտ գնալոյ կառա-
 ցն և սայլիցն :

Իսկ այն գլխաւորն որ զինքն եղբայր Աս-
 տուծոյ ասէր , եկն ընդ մէջ երկրին և կոխեաց
 անողորմաբար զտառապետ թրխտոնեայն . և
 զփայտեայ խաչ ուր և գտանէին ՚ի ճանապար-
 հըս և ՚ի լերինս կանգնեալ , զամենն այրէին ,
 և ոչինչ իրօք ոչ յագենային . այլ և զվանորսայն
 որ կային յերկիրն ուր և գտանէին առաւել
 եւս կոխէին ուտելով և ըմպելով . և զսրտ-
 աւական քահանայսն կախէին և ծեծէին անո-
 զորմաբար :

Իսկ գլխաւոր մի ՚ի խուլին հեծելէն զը-
 նաց ՚ի վանք մի որ ասի Գերեթին . և էր հայր
 վանիցն արեւոր և ծեր յոյժ ընտրեալ և սուրբ
 և առաքինի և ամենայն վարուք և բարի գոր-
 ծով ատարեալ Ստեփաննոս անուն . և նա յոր-
 ժամ ետես գլխաւոր Տաթարն որ գնայր առ
 նա ՚ի վանն . էառ զինի ամանով ինչ , և զը-
 նաց ընդդէմ Տաթարին , և բռնեաց տղու ,
 որպէս սովորութիւն է Տաթարին : Եւ ազա

յեա
 հան
 ւորի
 և յ
 մինչ
 յեր
 զի հ
 ննջե
 ցեա
 ժաւ
 ւան
 դեղ
 բայ
 այն
 զար
 զհա
 ձի
 վայ
 պա
 կան
 քոյ
 նոր
 Ստ
 սոյ
 սի
 ցա
 ՚ի յ
 կա

րկրորդ
ստեր և
րորդն
վեց-
Բաւ-
մեանց
ի գալն
շրջ-
ին աշ-
խառա-
ր Աս-
մեաց
ան և
սպար-
բէին ,
րայնն
աւել
պատ-
անո-
ն գը-
հայր
ուրբ
գոր-
յոր-
առ
գը-
ղու ,
աղա

յետ ոյնորիկ տարեալ 'ի վանքն և նստուցեալ
հանդերձ այլ հեծելօքն , որ կային զկնի գլխա-
ւորին , և զենեաց ոչխար . և եբաց այլ գինի ,
և յագեցոյց ուտելով եւ ըմպելով զամենն .
մինչ զի բռին կարէին դադարել 'ի ձիանն . և
յերեկոյն արբեալ գնացին 'ի տունս իւրեանց .
զի հուպ առ վանքն էր տուն Տաթարին :

Իսկ յորժամ հասին 'ի տունս իւրեանց և
ննջեցին զգիշերն , ընդ առաւօտն զարթու-
ցեալ տեսին զգլխաւորն հիւանդ յոյժ . և յոր-
ժամ հարցին թէ վասն ի՞նչ պատճառի է հի-
ւանդութիւնդ , ասաց գլխաւորն , թէ երէցն
դեղեաց զիս յերեկոյն , և էր անմեղ երէցն .
բայց վասն խարբ և անյագ ըմպելոյն իւրեանց
այնպէս հանդիպեցաւ : Եւ առ ժամայն յու-
ղարկեցին և կասպանօք տարան զհրաշալի ծերն
զհայրն Ստեփաննոս , և յետ շատ հարց և փոր-
ձի , և նոցա ոչ աւատալոյ , 'ի շորից կողմանց
փայտ ցցեցին , և սրկեցին անողորմաբար զան-
պարտն 'ի յայն բանն 'ի գետնոյն բարձր իբրև
կանգնաւ չափ . և ապա հուր վառեալ 'ի ներ-
քոյ այրեցին և խորովեցին զամենայն մարմինն
նորա , մինչև աւանդեաց զհոգին հրաշալի ծերն
Ստեփաննոս , և յայտնուպէս նշան և սիւն լու-
սոյ տեսին 'ի վերայ երանելի հօրն Ստեփաննո-
սի , որ այնպէս անմեղ և 'ի զուր նահատակե-
ցաւ , և ընդ սրբոց մարտիրոսացն պսակեցաւ :

Իսկ պեղծ և անող ըմ գլխաւորն այն զատ
'ի ցաւէն որ ունէր , հարեալ 'ի դիւէ , մինչ զի
կատաղեալ ուտէր զպեղծ մարմինն իւր . և այն-

պիտի չարչարանօք և դառն հարուստովք սա-
 տակեցաւ . նոյնպէս և ամենայն բանակն անկան
 'ի չար ախտ , և բազումք սատակեցան 'ի նա-
 ցանէ : Եւ թէպէտ այս սյսպէս գործեցաւ ,
 նորա ոչ վախէին Աստուծոյ . այլ յամառեալք
 հանապազ զխղճի և զդառն արտասուաց բանա
 գործէին . զի մեծ գլխաւորն իւրեանց խուլն
 այն՝ որ ամբարտաւանեալ նման և եղբայր Աս-
 տուծոյ ասէր զինքն , անկաւ նա 'ի ցաւ նկրը-
 սոյ . և այն ցաւին պատճառաւ անպատմելի
 խեղճ և ողորմ բան գործեցաւ : Զի գնացին
 անհաւատ Ղհուտ մի բժիշկ գասն , և բերին
 առ խուլն . և յորժամ ետես զցաւ նորա անօրէն
 և սուտ բժիշկն այն , ասաց գեղ ցաւին . զէկ
 տղայի փորն կենդանւոյն ձեղքել , և դնել զտոն
 'ի փոր տղայոյն : Եւ նոյն ժամայն հանեալ հե-
 ծեալ յերկրն , յանկարծակի մտանէին 'ի գե-
 ղանն քրիստոնէից և առնուին զտղայն 'ի փո-
 ղոցէն . և գայլու պէս փախուցանէին . և ծը-
 նողք մանկանցն զկնի գնային ճիչ և աղաղակ
 բարձեալ դառն և ողորմ արտասուօք , և ոչ
 կարէին թափել . այլ յետո գարձեալ գնային
 ողորմելի սրտով 'ի տունս իւրեանց . եւ թէ
 բռնադատեալ խէին զմանկունն , յայնժամն
 նետաձիգ լինէին 'ի ճնողս մանկանցն . և այս-
 պէս ողորմելի բանս եղեւ 'ի ձեռն անօրէն
 Ղհտին . մինչ զի յերեսուն տղայն հասաւ թը-
 ւով որ ձեղքէին զփորն , և ոչ լաւացաւ : Այլ
 իբրև զխոսաց անօրէն խուլն թէ այնչափ խեղ-
 ճըս գործեաց և ոչինչ օգտեցաւ , ասցա յետոյ

բարկ
 բերե
 ձեղք
 մայն
 յետ
 տաւ

 Առո
 յին :
 սաց :

 3
 նոր հ
 անթ/
 տատ
 առ ժ
 զՊազ
 ուակ
 թով .
 և գե
 հեծե
 և խո
 փայն
 ձիւք
 և սո
 հրամ
 նա ա
 նեւ '

սա
նկան
նա
աւ
եալք
անա
ուլն
Աս
կըը
մեկ
ային
երին
որէն
լեկ
ուն
հե
գե
փո
ծը
լակ
ուչ
յին
թէ
ամն
յս
մէն
թը
յլ
իլ
ոյ

բարկացեալ վասն խղճի տղայոցն , հրամայեաց
բերել զՏուտ հէքիմն . եւ իւրեան առաջի
ճեղքել զփորն և ընկենալ շանց . և առ ժա
մայն արարին զհրամայեալն : Բայց ինքն խուլն
յետոյ այլ ստտակեցաւ չար մահուամբ , և նրա
առաջ ՚ի տեղի խուլին Միղան անուն որդին իւր

ԳԼՈՒԽ ԺԱ .

Առումն Պաշտատայ եւ գերութիւն խաչիփա
յին : Անձնատուր շինի եւ բացաքն Մարտիրո
սաց : Աջ սուրբ առաքելոյն Բարգուցիմեոսի :

Յետ այսորիկ արարին ժողով մեծ հին և
նոր հեծեւոց և Վրաց և Հայոց հեծեւոյն , և
անթիւ բազում թեամբ գնացին ՚ի վերայ Պաղ
տատ քաղաքի . և յորժամ հասին ՚ի տեղին ,
առ ժամայն առին զքաղաքն մեծ և անուանի
զՊաղտատն , լռեալ բազում մարդովք և պատ
ուական գանձիւք և անթիւ ոսկւով և արծա
թով . և յորժամ առին , յանինայ կատորեցին ,
և գերեցին զբազումս . և լցան առ հասարակ
հեծեալն ամենայն պատուական հանդերձիւք
և խալիփատի ոսկւով : Ըմբռնեցին և զխալի
փայն զտերն Պաղտատայ իւր ամենայն գան
ձիւքն , և բերին առաջի Հուլաւունին զիրացած
և սոնքացած . և յորժամ ետես Հուլաւունն
հրամայեաց , թէ գնւ ես տերն Պաղտատայ . և
նա առայ թէ ես եմ . և չսպա հրամայեաց զը
նել ՚ի բանտի զերեք օր անհաց և անջուր , և


յետ երեք աւուրն հրամայեաց բերել առաջի
իւր , և եհարց Հուլաւունն զԽալիփայն , թէ
ի՞նչ ցեղ կաս . և նա ցասամբ պատասխանի ա-
րար , իբր թէ վախեցնելով զՀուլաւունն , ասէ .
այդ է ձեր մարդու թիւնն , որ ես երեք օր յա-
նօթի կենամ . զի յառաջագոյն ասացեալ էր Խա-
լիփայն ցքաղաքայիսն թէ մի վախէք . թէ լի-
նի , ու Տաթարն գայ , զՄահմետի դրօշենն 'ի
դուրս բերեմ , որ Տաթարին հեծեալն ամեն
անկցի և մէք ապրիմք . և զայս լուեալ էր Հու-
լաւունն և յոյժ բարկացեալ . և ապա հրամա-
յեաց Հուլաւունն , տապաղ մի կարմիր ոսկի
բերել և դնել առաջի . և յորժամ բերին , ա-
սաց Խալիփայն , այս ի՞նչ է . ասաց Հուլաւունն ,
թէ ոսկի է , կեր , որ քաղցր և ծարաւդ ան-
ցանի , և կշտանաս : Ասաց Խալիփայն . թէ ոս-
կուով ոչ ապրի մարդն . այլ հացով և մսով և
գինուով : Ասաց Հուլաւունն զԽալիփայն . երբ
գիտես զայդ , որ մարդն չոր ոսկուով չապրի ,
այլ հացով և մսով և գինուով . դու այդչափ
ոսկի էր չուղարկեցիր ինձ ընդդէմ , որ ես չէի
եկեալ , ու զքո քաղաքս աւերեալ , ու զքեզ
կալեալ . ու դու քեզ անհոգ նստեալ էիր կե-
րեալ և խմեալ : Եւ ասաց հրամայեաց Հուլա-
ւունն զօրացն ոտիւք տալ և այնպէս սպանանել
զԽալիփայն Տաճկաց : Եւ գնացին բազում գան-
ձիւք և աւարաւ յաշխարհն արեւելից :

Եւ 'ի գալ ամին եկին 'ի վերայ Մուփարդե-
նին , և ոչ կարացին առնուլ զնա . զի ամրագոյն
չինեալ էր զնա սուրբն Մարութայ քաղաք մար-

տիրոս
և եդ
և ան
մինչե
րաց ա
կայնա
մինչ
սէին
և այս
րիս ա
Հայոց
նշխալ
իւրե
Ի
յաղգ
Ասոր
աւուր
ուրա
և եդ
իշխա
ետն
մեծ
աջն
Հաղ

տաւա՛ր տիրոսաց, և ամենայն սրբոց ժողովեաց նշխարս
 , թէ և եղ ՚ի նմա . և ամրագոյնս պարսպեաց զնա ,
 սնի ա- և անուանեաց զնա քաղաք Մարտիրոսաց . որ
 ասէ . մինչեւ ՚ի ժամանակ Տաթարիս , այլ ոք ոչ կա-
 որ յա- բաց առնուլ զնա առանց սիրոյ : Եւ ապա եր-
 ր խա- կայնամիտ զօրք Տաթարին ՚ի հետար արկեալ ,
 թէ լի- մինչ ՚ի սովոյ կերան ամենն զիմեանս . և ա-
 հնն ՚ի սէին թէ իշու գլուսս մի եղեւ յերեսուն դրամ .
 ամեն և այսպէս նեղութեամբ ՚ի հետար արկեալ զե-
 չու- ռիս ամս կալան զքաղաքն Մարտիրոսաց . որ և
 ամա- Հայոց զօրքն որ կային ընդ Տաթարին բազում
 ոսկի նշխարս գտեալ ՚ի սրբոցն տարան յաշխարհն
 , ա- իւրեանց :

Իսկ մեծ իշխանն Հայոց Թադեազին անուն
 յաղգէն Բարդատունեաց ըմբռնեալ երէց մի
 Սարի և ՚ի խոտտ ամեալ , եզիտ զաջ սրբոյ
 աւաքե լոյն Բարդուղիմէոսի . և տարեալ մեծաւ
 ուրախութեամբ յաշխարհն իւրեանց յարեւելք
 և եղ ՚ի վանս իւր : Եւ յետոյ հարկեալ ՚ի մեծ
 իշխանէն Սրժբու նեաց՝ որ ասի Սադուն անուն ,
 ետ նմայ . և առեալ Սադունն տէրն Հաղբատոյ
 մեծ և հաշակաւոր սրբոյ ուխտին , եզ զսուրբ
 աջն Բարդուղիմէոսի աւաքե լոյն ՚ի սուրբ ուխտն
 Հաղբատ . և է անդ ստուգապէս :



արդ
 ոյն
 մար

ԳԼՈՒԽ ԺԲ .

Նստի Ղան Հուշաւուն հրամանաւ Մանկու
Ղանին, անհնազանդութիւն եւ դատիժ չորիցն՝
յեւթանց որդւոց եւթն Ղանացն . կրկին ըմ-
բիշք եւ ըմբշամարտ :

Իսկ եւթն Ղանի սրգիքն որ եկին և առին
զՊաղտատ քաղաք , և լցան բաղում գանձիւք
տակում և մարդարտով , ոչ հնազանդէին միմեանց ,
այլ կայր ամենայն գլխաւոր իւր սրտովն մեծ ,
և անասախ աւիրէին և կոխէին զաշխարհն ա-
րեւելից :

Իսկ մեծ իշխանն և անուանի 'ի նոցանէ ու-
րում անուն էր Հուլաւու , և էր սա եղբայր
Մանկու Ղանին , որպէս յառաջագոյն ասացաւ :
Սա յաւարկեաց առ Մանկու Ղան եղբայրն
իւր 'ի բուն արեւելք , և այսպէս պատու իրեաց
գնացելոցն . թէ մեք եկաք այս եւթն դումանա-
գլուխքս Աստուծոյ և ձեր ուժով , և զհին հե-
ծեալն զԹեմայէքն հանաք աստի , և գնացաք
սուսք զՏաճկաց քաղաքն զՊաղտատ , և շատ
իրօք դարձաք Աստուծոյ և ձեր ուժով : Հէմ
այլ ինչ հրամայէք մեզ , թէ այս յեղ անասախ
և անգլխաւոր կացուք , այս աշխարհս աւիրի ,
ու Չանկրդ Ղանի հրամանքն չլինի . զի նա հը-
րամայեաց զմեր հնազանդեալ և զմեր սիրով
կալեալ զաշխարհն շինել , և ոչ աւիրել : Եւ այլ
հրամանն առ ձեզ է , զինչ մեզ հրամայէք , մեք
զայն առնեմք : Եւ այսպիսի խօսիւք գնացին

ելչիքն
Եւ
Մանկու
հրամայ
ասցեալ
իւրոց
գնացէ
Ղան յ
յասախ
արդու
մեծ խ
որ եկե
Վրաց
Բաշու
'ի լեւել
զուչիք
գիքն .
դաւար
էր սրգ
ասին
չիքն զ
րեւ լու
մի Ղան
հնազան
Բաւրա
Բաղախ
զան ոչ
լու չիք
զանդե
նին , ա

ելջիքն առ Մանկու Ղանն 'ի Հուլաւէն :

Եւ յորժամ հասին 'ի տեղին ելջիքն, եհարց
 Մանկու Ղանն զեղբօրէն, և նորա ասացին ըզ-
 հրամայեալն 'ի Հուլաւէն : Իբրեւ լուաւ զա-
 սացեալն Մանկու Ղանն, ապա հրամայեաց
 իւրոց արղուչեացն, այսինքն դատաւորացն, թէ
 գնացէք և դրէք զՀուլաւունն զեղբայրն իմ
 Ղան յերկիրն յայն, և որ ոչ հնազանդի նմա զայն
 յաստին հասուցէք մեր հրամանաւ : Իսկ եկեալ
 արղուչեացն հրամանաւ Մանկու Ղանին, արարին
 մեծ խուռու թայ, և կոչեցին զամէն գլխաւորսն
 որ եկեալ էին զկնի Հուլաւուն, կոչեցին ըզ-
 վրաց թագաւորն իւր հեծելոյն, կոչեցին ըզ-
 Բաշուն իւր հեծելոյն, և եգին բանս ծածուկս
 'ի լեւիս նոցա, և 'ի վերայ այսորիկ կոչեցին ար-
 զուչիք Մանկու Ղանին մեծ ելջօք զՂանի որ-
 դիքն, զԲալախէն, զՏուլթարն, զՂատաղանն,
 զԲաւրաղանն, զԹագուդարն, զՄիղանն, որ
 էր որդի խուլին : Եւ իբրեւ ամենն 'ի մի-
 ասին ժողովեցան, յայնժամ ասացին արղու-
 չիքն զհրամայեալն 'ի Մանկու Ղանէն : Իսկ իբ-
 րեւ լուան Ղանի որդիքն թէ Հուլաւին կա-
 մի Ղան նստել բարկացան չորսն և ոչ կամեցան
 հնազանդել Հուլաւուն : Իսկ Թագուդարն և
 Բաւրաղանն հնազանդեցան Հուլաւունի, և
 Բալախայն, և Տուլթարն, և Ղատաղանն, և Մի-
 ղան ոչ հնազանդեցան : Իբրեւ գիտացին ար-
 զուչիք Մանկու Ղանին, թէ այս չորսս չեն հնա-
 զանդելոց, այլ կամին կռուել ընդ Հուլաւու-
 նին, ապա հրամայեցին զԲալախէն, և զՏու-

անկու
որիցն
ն ըմ-

աւին
ծիւք
անց,
մեծ,
ն ա-

է ու
բայր
ցաւ :
այրն
եաց
նա-
հե-
ցաք
չամ
էմ
ախ
դի,
հը-
ով
այլ
մէք
ցին

Թաղնուկ զՂատաղանն յաստին հասուցանելայս
ինքն աղեղան ըստով խեղդել . զի նոցա օրէնք
է զխանն այնպէս սպանանել : Իսկ Միղանն որ
էր սրդի խուլին , և էր տիգր տղայ , զնա կալան
և եղին 'ի բանտի 'ի մէջ ծովուն , որ կայ 'ի
Հեր և 'ի Չարաւանդ գաւառի : և դարձեալ հը-
րամայեցին արդու չիք Մանկու Ղանին Հայոց և
Վրաց զօրացն , նոյն և Հուլաւունին զօրացն
գնալ 'ի վերայ զօրաց նոցա և յանինայ կոտորել
զնոսա . զոր և արարին իսկ , Եւ այնչափ կոտորե-
ցին մինչ զի նեխեցաւ լեառն 'ի դաշտի կոտո-
րեալ մարմնոց հալթարին : Իսկ երկու գլխաւոր
միայն հուխաբաւուն անուն , և մի սոյն Արա-
դամուր յաւաջագէտ եղեն , և առին երկոտա-
սան հաղար հեծեալ և բազում գանձս և ոսկիս .
և աղէկ ձիորչափ կարացին և փախեան և գնացին
անցան ընդ մեծ դետն որ ասի Աուր , և մինչ 'ի
յերկիրն իւրոց ուստի եկեալ էին , այլ ոչ դադա-
րեցան . և յերկրն իւրեանց զԲերքէն օգնական
կալան իւրեանց որ էր եղբայր Սային Ղանին , և
բազում ոճիրս գործեցին զամս տասն : Իսկ
արդու չիք Մանկու Ղանին որ եկեալ էին մեծ ա-
սախով յեղին զՀուլաւունն Ղան մեծ պատուով :
Եւ եղև խաղաղութիւն առ Ժամանակ մի . զի
էր Հաւլաւունն Ղանն յոյժ բարի , սիրող քրիս-
տոնէից , և եկեղեցւոյ , և քահանայից . նոյնպէս
և օրհնեալ կինն իւր հաւստի խալթունն . զի յա-
մենայնի բարի էր և ողորմած առ աղքատս և
կարօտեալս և յոյժ սիրող ամենայն քրիստոնէից .
Հայոց և Ասորոց . մինչ զի վրանէ եկեղեցի և

ճամահար շրջեցուցանէր ընդ ինքեան, և բա-
ս օրէնքս զուրմ քահանայս Հայ և Ասորի :

Իսկ լուեալ զայս բարեպօշտ թագաւորն
Հայոց Հեթում. թէ Հողաւունն Ղաննատաւ և
այնպէս բարետէր է, և քրիստոնէասէր, ապա
ինքն Հայոց թագաւորն գնաց յարեւելք բա-
ղում ընծայիւք, և ետես զՀողաւունն Ղանն, և
տեսեալ Ղանն զՀայոց թագաւորն յոյժ սիրեաց
և պատուեաց զնա. և կրկին ազատութիւն գը-
րեաց թագաւորութեանն նորա. եւս առաւել
եկեղեցեաց և եկեղեցականաց, և ամենայն քը-
րիստոնէից երկրիս : Եւ այսպիսի պատուով և
մեծաւ հարկեօք առաքեաց զթագաւորն Հայոց
յաշխարհն իւր : Այլ և բաղում թագաւորք և
Յուլտանք եկին նմա ՚ի հնազանդութիւն բա-
ղում ընծայիւք. և մեծացաւ Հողաւունն Ղանն
և հարստացաւ այնքան որ ոչ գոյր թիւ հեծելոց
և զօրաց նոցա. նոյնպէս և ամենայն իրօք. զի
պատուական ակն և մարգարիտն իբրեւ զաւազ
ծովու էր առաջի նորա. թող զայլ ցեղ մեծու-
թիւն և բաղմութիւն ոսկոյ և արծաթոյ, և
մեծաւ ճիող և հօտից, որոց ոչ գոյր չափ և թիւ :

Իբրեւ գիտաց Հողաւունն Ղանն թէ երես
նմա Աստուած զանութիւն և մեծութիւն և բաղ-
մութիւն զօրաց և հեծելոց և զամենայն ընչից :
Յայնժամ հրամայեաց դարսլաս շինել իւր մեծ
ճախօք ՚ի Դաւն գաշտին զոր կոչեցին իւր-
եանքն զանուն տեղոյն Ալատաղ, որ էր զառաջինն
տեղին այն նստոց ամարան մեծ թագաւորացն
Հայոց, այսինքն՝ Արշակունեացն : Եւ էր ինքն

Հուլաու Ղանն մեծախելք, մեծամիտ դատաւոր
 ամենեւին գիտուն և յոյժ արիւնասէղ բայց
 զչարսն և զթշնամիսն սպանանէր, և ոչ զբարիսն
 և զբարեսէրսն: Սիրէր առաւել զազգ քրիստո-
 նէից քան զաղազդեաց: Եւ այնչափ օխրեաց
 զքրիստոնեացսն, որ զմի տարեան հարկն խող է-
 առ 'ի Հայոց դոճեմայր հարիւր հազար, և յա-
 մեն տաճիկ քաղաք երկու հազար խող առա-
 քեաց և հրամայեաց դնել տաճիկ խողարածս,
 և յամեն շաբաթ գիր մի սասորնով լուանալ, և
 զատ'ի յարօտոյն, ամեն վաղ և երեկոյ տալ նուշ
 և ամպրաւ խողիցն ուտելոյ, և տաճիկ մարդ ե-
 թէ մեծ և եթէ փոքր որ ոչ ուտէր միս խողն,
 գլուխն կտրիւր: Եւ այսպէս սրտուէր զՏաճ-
 կունք, և այս եղև 'ի խրատուէ զօրացն Հայոց
 և Վրաց զի յոյժ սիրէր Հուլաու Ղանն զզօրքն
 Հայոց և Վրաց, վասն կարի քաջութեան իւ-
 րեանց, զոր առնէին առաջնորա յամենայն սլա-
 տերազմունս, վասն որոյ Բահատուրս անուանե-
 աց զնոսա, զի զգեղեցիկ և զերիտասարդ որ-
 դիս մեծ իշխանացն Հայոց և Վրաց ընտրեաց
 և կացոյց դռնապանս իւր, և անուանեաց զնոսա
 Քէսիկ Թոյք, որ էն դռնապանք սրով և աղե-
 դամբ: Սկսաւ և զաւեր տեղիսն շինել, և յա-
 մեն շէն գեղէ, մէկ անուոր հանէին, 'ի փոքրէն
 մէկ, 'ի մեծէն երկու կամ երեք, և անուանեաց
 զնոսա Իամ: Եւ առաքէր զնոսա յամեն աւեր
 տեղիսն առնել շինութիւն, և ամենեւին հարկ
 ոչ տալ, բայց միայն հաց և թան ճանապարհորդ
 Տաթարի: Այսպիսի կարգօք հաստատեաց զիւր

զանու
 և յըն
 Ը
 Մանկ
 յոյժ ա
 նեղ շ
 իբրեւ
 և ունե
 զին կ
 Այս ա
 լաւու
 զայդ է
 քայդ
 հազո
 Յա
 նայն գ
 գիտէք
 որ զդ
 զի ով
 յահագ
 Հայոց
 մարդ
 Ղանն
 տեղս
 ժամայն
 ձիով
 ցին Հ
 Բարձր
 գուն ա
 յոյժ ո

զանաւթեան աթոռն . և ինքն նստաւ յուտել
և յբնդէլ բազում ուրախութեամբ :

Ընդ աւուրսս ընդ այսօրիկ եկն այր մի 'ի
Մանկու Ղանէն Մուղալ ազգաւ , և էր այրն այն
յոյժ ահագին տեսողացն , երկօյն հասակաւ թիկ
նեղ , շինն զերդ զգոմիշու , ձեռներն անձուռնի
իբրեւ զարջու , և ամեն օրին ուտէր սչտար մի .
և ունէր 'ի Մանկու Ղանէն 'ի հետ գիր և ան-
դին կապայ մի . և գրեալ էր 'ի գիրն այսպէս .
Այս անուն բաւքայ երեկ առ իմ եղբայր Հու-
լաու Ղանդ , թէ լինի որ բաւքայ որ զգա ձգէ .
զայդ կապայդ նմա հագո . ապա թէ իմ բաւ-
քայդ զքոյնն ձգէ , յայնժամն զկապայդ դմա
հագո . և մեծ ելչուով յիս յղարկեա :

Յայնժամ Հուլաու Ղանն կոչեաց զամե-
նայն զլիսաւորս զօրաց իւրոց , և հրամայեաց թէ
գիտէք մարդ Տաթար կամ Հայ կամ Վրացի ,
որ զգա ձգէ . և որոնեցին և Տաթար ոչ գտին .
զի ով տեսանէր զայրն զայն՝ ամենայնն վախէին
յահագին հասակէն և 'ի տեսոյ նորա : Իսկ
Հայոց և Վրաց իշխանքն ատացին թէ մեք գիտեմք
մարդ . որ մի թէ 'ի նմանէ լինի ճար , և հրամայեաց
Ղանն փութով բերել . և ասացին թէ չէ 'ի
տեղո , այլ կայ 'ի տուն իւր . և հրամայեաց առ
ժամայն ելչեաց շուտով հասուցանել . բայց ոչ
ձիով , այլ սայլով : Եւ էր այրն այն զօր ասա-
ցին Հայոց և Վրաց իշխանքն , յազգէն 'ի
Բարձր Արժրուռնեաց թոռն Ամիր Քրդին , Սա-
ղուռն անուռն . երկօյն և վայելուչ հասակաւ ,
յոյժ ուժեղ 'ի մանկութենէ և փորձ և կիրթ

'ի գործն յայն . բայց առաջի Ղանին այլ չէր բռնել մարդ :

Յայնժամ իբրեւ գնացին ելչիքն , և ասացին զհրամանք Ղանին , արամեցաւ Սաղուենն . զի առաջի Ղանին այլ ոչ էր բռնեալ մարդ , և մի այս , որ ահագին և ուժով լսեաց զհաշուակիցն իւր : Եւ ապա յանձնեաց զինքն վանորէիցն աղօթել վասն նորա . և ինքն երթեալ 'ի Գագ առ ատենահաս սուրբ Սարգիսն , զոր օրհնեաց երանելի և սուրբ վարդապետն Մեսրովբ . և արարեալ անդ ուխտ և մատաղ սրբոյ նշանին , և ապա առեալ զելչիքն գնաց առ Հալաւու Ղանն :

Իսկ յորժամ ետես Հուլաւու Ղանն զՍաղուենն և զկորովի և զերկայն հասակ նորա , յոյժ ուրախացաւ , և հրամայեաց ինն օր երկու բաւքային կալ 'ի միասին , և ամենայն օր են ուտալացոյք ոչխար մի և տիկ մի զինի : Եւ յորժամ վճարեցաւ ինն օրն այն , ապա հրամայեաց ժողովել ամենայն զլիաւորացն առաջի իւր , և կոչեալ զերկու բաւքայն , հրամայեաց բռնել զմիմեանս . և յորժամ բռնեցին զմիմեանս , էր աւուրն երեք ժամ . և յերեք ժամէ աւուրն մինչեւ ցվեց ժամն զիրեարս կային առեալ երկուսն և ոչ կարէին միմեանց յաղթել : Եւ ապա Սաղուենն զօրացեալ անսլամբն Աստուծոյ յանկարծակի ուժովն բախմամբ զգետնեաց զբաւքայ Մանկու Ղանին առաջի Հուլաւու Ղանին . և մեծացաւ Սաղուենն առաջի Ղանին . և նման նմա ոչ գտաւ յամենայն եր

կիր հո
մանակ
Ղանն
'ի յի

Գրատե
Հաշբ

Ե
ցրն ժ
զլիաւ
սա 'ի

թայն
գերեց
Հուլա
լին . և

առ ին
եաուեն
Հուլա

Ի
մանն
ուրս Տ
վեր :

'ի վեր
և ինք
եպագ
'ի տե
յաշխ

կիր հարկեօք և մեծութեամբ և ուժով 'ի ժա-
մանակս Տաթարին , և հրամայեաց Հուլաու
Ղանն գրել իառլախ , և թողուլ նմայ մինչեւ
'ի յինն գունահն :

ԳԼՈՒԽ ԺԳ .

Պատերազմունք Հուլաու Ղանին 'ի վերայ
Հաչբայ, Դամասկոսի եւ Երուսաղէմի, եւ մահ
նորա:

Եւ զկնի այսորիկ հրամայեաց Ղանն զօրա-
ցն ժողովել 'ի տանէն երկօքն , և եդ նոցա
զլիսաւոր զՔիթ Բուղայն , և յուղարկեաց զնո-
սա 'ի վերայ Հալբայ և Դմշկայ . և ընդ եր-
թալն առին զՀալբ և յանխնայ կոտորեցին և
գերեցին և լցան բաղում գանձիւք . և ինքն
Հուլաու Ղանն գաղտ գնացեալ զկնի հեծե-
լին . և յորժամ գիտացին Դամասկացիքն , թէ
առին զՀալբ , ապա ինքեանք իւրեանց կամաւ
եաուն զքաղաքն և զբանալի քաղաքին 'ի ձեռս
Հուլաու Ղանին :

Իսկ Երուսաղէմ քաղաքն և սուրբ գերեզ-
մանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ կայր 'ի ձե-
ռս Տաճկացն 'ի Սալահատին Սուլտանէն 'ի
վեր : Չայս լուեալ Հուլաու Ղանին գնաց
'ի վերայ Երուսաղէմ քաղաքին և եառ զնա .
և ինքն մտաւ 'ի սուրբ Յարութիւնն , և երկիր
եղադ սրբոյ Գերեզմանին . և թողեալ զզօրքն
'ի տեղն , և ինքն գարձաւ խաղաղութեամբ
յաշխարհն արեւելից :

Իսկ Քրիստ Բուզայն որ էր զլիսաւոր զօրացն
 Տաթարին՝ հպարտացեալ անցաւ քան զԵրուսա-
 ղէմ՝ ՚ի վայր տաան աւուր ճանապարհ : Իսկ
 . . . անիրաւ Մարցին գիտացեալ զանպատ-
 րաստ կենալ զօրացն Տաթարին, ապա զօրաժո-
 ղով լեալ անթիւ բազմութեամբ եկն ՚ի վերայ
 Տաթարին, և զբազումս կատարեաց ՚ի նոցանէ,
 և զբազումս փախստական արար, և զբազումս
 գերեաց, և դարձեալ էառ զԵրուսաղէմ ըզ-
 Հալլ և զԴրմբշխ, և այս եղև օգնութեամբ
 Փռանգ հեծելոյն, զի գեռ չէին սէր ընդ Տա-
 թարին, և այս այսպէս գործեցաւ :

Իսկ ընդ աւսւրսս ընդ այսօօիկ երեւեցաւ
 աստղ մի վարսաւոր, և ծագեաց նա յառաջ
 ընդ առաւօտն յաւուր շաբաթու ՚ի տօնի Տա-
 պանակին, և օր ըստ օրէ աճէր վարս և շառա-
 ւեղ աստղին, զի յառաջագոյն ընդ առաւօտն
 ծագեաց, և ապա փոքր փոքր յամելով անկաւ
 ՚ի ճաշու ժամն, և անգ ծագէր, և այսպէս
 զօրն յետ ձգելով հասաւ յերեկոյն, և ՚ի մետա-
 սան ժամու աւուրն ծագէր, և շառաւեղք վար-
 սին հասանէր յարևելից մինչև ՚ի մէջ երկրիս, և
 այնչափ շատացաւ շառաւեղք վարսին, մինչ զի
 յոյժ ահագին երեւէր ամենայն աշխարհիս, վասն
 զի ոչ էին տեսեալ այսպիսի զարմանալի նշան
 ՚ի վերայ երկրի, և այսպէս յաւելլով ՚ի շառա-
 ւեղսն լայն և ընդարձակ եկաց մինչ ՚ի մուտս
 ձմերան ամսոյն, և ապա որպէս աճեացն նոյն-
 պէս սակաւ սակաւ պակասէր օր ըստ օրէ,
 մինչեւ ամենեւին հատաւ շառաւեղք վարսին
 և այլ ոչ երեւիւր :

Իս
 ցաւ
 զքս
 ա
 երկր
 իտեցաւ
 ռաւե
 որչափ
 կալաւ
 զին :
 ասրեց
 յաշխա
 դի : Դ
 շուլա
 Տաւվո
 ամենայ
 Մահ կ
 յոց Հե
 որդի ն
 կոսն Հ
 տանին
 Թիւն Լ
 հեծու
 Յա
 ՚ի Քրի
 կոսար
 թող ս
 մոյլե ա

Իսկ Հուլաւու Ղանն յորժամ ետես, իմա-
 ցաւ առ ժամայն, թէ վասն իմ ծագեաց սատ-
 ղըս այն. և անկեալ 'ի վերայ երեսաց իւրոց
 երկիր ետագ Աստուծոյ. վասն զի յոյժ վա-
 խեցաւ յորժամ՝ սկսաւ պակասիլ աստղին շա-
 ռաւեղքն. և ամենայն երկիր իմացաւ զայս, որ
 որչափ Հուլաւու Ղանին ձին գնաց և երկիր
 կալաւ, այնչափ երկայնացաւ շառաւեղք աստ-
 ղին: Եւ ապա պակասեաց. զի տարի մի այլ
 ապրեցաւ Հուլաւու Ղանն, և ապա պակասեաց
 յաշխարհէս. թողեալ յետ իւր երեսուն որ-
 դի: Դարձեալ և 'ի նոյն ամին յորում մեռաւ
 Հուլաւու Ղանն, մեռաւ և բարի կին նորա
 Տաւփուս խաթունն, և յոյժ տրտմու թիւն եղև
 ամենայն քրիստոնէից մահ նոցա:

ԳԼՈՒԽ ԺԴ.

Մահ կոստանդին իշխանի Հօր Թագաւորին Հա-
 յոց Հեթմոյ: Յաջորդե ջՀուլաւունն Աբացան
 որդի նորա: Մեռանի Տ. կոստանդին կաթուղի-
 կոսն Հայոց: Յարձակումն Փնտուխաւրայ Մուշ-
 տանին Եգիպտոսի 'ի վերայ Հեթմոյ. գերու-
 թիւն Լեւոնի արքայորդւոյն Հայոց, ցաւ եւ
 հեծու թիւն Հեթմոյ ընդ կորուստ որդւոցն:

Յաւուրս յայտոսիկ փոխեցաւ մահուամբ
 'ի Գրիստոս Թաղաւորահայրն Հայոց պարոն
 կոստանդինն ալեւորեալ և լի աւուրբք. և ե-
 թող սուգ մեծ բարեպաշտ Թաղաւորին Հեթ-
 մոյ, և այլ ամ որդւոցն և աշխարհիս Հայոց. վա-

սըն զի պարսն Աստուրնդինն էր պատճառ շինու-
թեան աշխարհիս Հայոց . և հաստատու թեան
թագաւորոշ թեան որդւոյ իւրոյ Հեթմոյ, վասն
որոյ կանգնե ալ քրիստոսապաակ թագաւորն Հե-
թում, և մեծաւ պատուով թաղեաց զՊարսն
հայրն իւր . որոյ Քրիստոս Աստուած փառա-
ւորեցէ զհոգի նորա, և սրբոց իշխանայն մաս-
նակից արացէ յիւր արքայութեանն :

Իսկ զկնի Հուլաւոյն մահուանն յետ ամի
միոյ արարին մեծ խուռութայ, և եղին զԱբա-
ղանն Ղան, զաւագ որդի Հուլաւունին, և էր
Աբաղանն բարի տեսեամբ և գեղեցիկ հասա-
կաւ 'ի մէջ երեսուն եղբարց իւրոց . և յաւու-
րըս զանու թեան նորա էր աւատութիւն ամե-
նայն իրաց ընդ ամենայն երկիր :

Իսկ ընդ աւուրսս ընդ այսոսիկ փոխեցաւ
'ի Քրիստոս սուրբ և անբիծ հայրապետն Հայոց
տէր Աստուրնդինն բարի անուամբ և կատարեալ
ծերութեամբ . որոյ ազօթիւք նորա տացէ Քր-
իստոս իաղազոշ թիւն երկրպագուաց անուան
իւրոյ : Եւ զբարեոէր հոգի նորա և զսիրող ուղ-
ղափառութեան հաւատոյ, և ամենայն կարգաց
Եկեղեցւոյ իւր սրբոց Հայրապետացն պակա-
կից արացէ, լսելով զձայնն որ ասէ . « բարի ծա-
ուայ և հաւատարիմ, եկ մնւտ յուրախութիւն
տեառն քո 'ի կեանսն յաւիտենից » :

Իսկ բան իմաստնայն աստ կատարեցաւ, որ
ասէ . « 'ի պակասեւ բարեացն և բարերարացն,
առաւելուն ուխք չարութեանն » : Արտէս և
առ մեզ կատարեցաւ : Չի անօրէն և կատա-

և շինեալ ի Սուլտանն Մարայ եկն բազում զօրօք ՚ի
ութեան մըշխ, և անտի յուղարկեալ դեսպանս առ
նոյ. վասն թագաւորն Հայոց վասն սիւնու ի ինչ, զի խըն-
որն Հեգրէր ՚ի թագաւորէն, և թագաւորն Հայոց ոչ
զՊարսոցայր. այլ պատուիրէր բանս նախատանաց. . .
փառաճառայ ասելով նմա, այսպիսի պատճառաւ :
յն մասն Յորժամ Տաթարն զՊաղտատ էառ, յայն ժա-
մըն էին երկու ծառայք Սուլտանին Մարայ ՚ի
էտ ամ Պաղտատ. անուն միոյ՝ Փնտուխտար, և միոյն
զԱբա Սղուր. իսկ յորժամ իմացան թէ էառ Տաթա-
ր. և էրըն զՊաղտատ, առեալ երկու ձի փախեան զէմ
հասաւ դեալ գնալ ՚ի Մար: Իսկ Տաթարն աեսաւ
յաւուզ փախուստն նոցա, գնացին ՚ի վերայ նոցա ձիա-
ն ամէ թողք. իսկ Փնտուխտարն էր մօրսւօք և ու-
նէր մէշում ձի. և Սղուրն էր տղայ, և ձին ա-
փեցաւ զէկ. երբ իմացան թէ հասանել կամի Տաթա-
ր Հայոց որն և զերկուսն ըմբռնել, Սղուրն իջեալ ՚ի
տարեալ տաճիկ ձայն, էտ ՚ի Փնտուխտարն. և ինքն ե-
ցէ Քըլաւ ՚ի վատ ձին. և սոսց Փնտուխտարին թէ
սնուան դու ել ՚ի յաղէկ ձիդ և փախիր. ես տղայ եմ
զ ուղ թէ զիս բռնեն, սպանեն ոչ, այլ տանին ծա-
արդայ ուայ. յայն ժամն զինչ ՚ի քեզ ճար լինի զիս
յաակաւ գնեա. և առ ժամայն հասան Տաթարնին և ըմ-
րի ծաբըռնեցին զՍղուրն, և տարան ծառայ. և ըզ-
ւթիւն Փնտուխտարն ոչ կարացին ըմբռնել, զի ձին ազ-
նիւ էր, փախեաւ և գնաց ՚ի Մար. և ՚ի գնալն
ու, որ նորա ՚ի Մար մեռաւ Սուլտանն Մարայ. և եդին
յոցն զՓնտուխտարն Սուլտան Մարայ: Չայս լուեալ
էս և Հայոց թագաւորին. . . ծառայ ստէր նմա.
յատա. և ոչ առնէր սէր, այլ կայր ընդդէմ նմա ան.

ակր և անհնազանդ . գիտելով զսարսն հայրն
իւր կենդանի , և կամ զիւր իշխանան միամիտ :

Եւ գիտացեալ Սուլտանին զմիտս թագա-
ւորին Հայոց , յուղարկեաց բազում հեծեալս
'ի վերայ աշխարհիս Հայոց ընդ Ճանապարհն
Մառոց , և ինքն գնաց նստաւ 'ի Խարխէ , և
սրատուիրեաց զօրացն թէ կարեն մտանել յեր-
կիրն անխնայ կտորել զքրիստոնեայսն և քա-
կել զեկեղեցիսն և այրել զշինու թիւնս քաղա-
քաց և գեղից , և կող յերկիրս զաւուրս հնգե-
տասան . և գերել զկանայս և զտղայս քրիստո-
նէից , զսր և արարին իսկ :

Իսկ թագաւորն Հայոց իբրեւ գիտաց ըզ-
գալ թուրքին 'ի վերայ երկրի իւրոց , յանժամ
ժողովեաց զզօրս իւր , և ետ 'ի ձեռս թագա-
ժառանգ որդւոց իւրոց Պարոն Լեւոնի և Թո-
րոսին , և ինքն գնաց սակաւ մի զօրօք աւ Տա-
թարն որ կայր իջեալ 'ի մէջ Աբլատին և Կոկը-
տոնոց , և անդ յամեալ աւուրս ինչ ոչ գիտելով
զերպառակաւ թիւն զօրաց իւրոց , և մինչ հոգաց
առ գլխաւորս Տաթարին գալ և օգնել զօրաց
նորայ , և ինքն երեկ երկու աւուրք յառաջ , ա-
սլա լսեաց զգալն թուրքին և զբեկուին զօրացն
երկմտից , որ ետուն զթագաժառանգ որդիսն
իւր 'ի ձեռս անօրէն գայլոցն , և ինքեանք փա-
խեան յամուրս իւրեանց , զի զգեղեցիկ որդի
թագաւորին զՊարոն թորոս 'ի սրտերապմին
սրախողխող արարին յիւրում երկվարին , զՊա-
րոն Լեւոն ըմբռնեալ բազում զօրք թուրքացն
և տարան ծառայ 'ի Մսր :

ն հայրն Եւ զայս լուեալ մեծախելք թագաւորն
 իամիս հեթուամբ բեկաւ սիրան 'ի կաթի և յանհնարին
 թագաւորամու թենէն որ յանկարծահաս դիպեցաւ . և
 ճեծեալք ի կարէր կանգնել 'ի սիրտ իւր . մինչ եկն 'ի
 ապարհասուրք և 'ի դերահաչակ ուխտն միանձանց 'ի
 իսէ . և Սկահայ անասաւտա . և աստ մի թարեալ սակաւ
 ել յերմի 'ի միեղէն եղբարց սուրբ Ուխտիս կեցեալ
 և քաւաւուրս ինչ , մինչ ելաւ Թուրքն յերկրէս . զի
 քաղաւանորէն զօրք Թուրքին զամեն պատուիրեալն
 հնգէ 'ի Սուլտանէն արարին . զՍիս քաղաքն այրե-
 ցին որ է նստոց թագաւորին Հայոց . և ըզ-
 գովելի մեծ եկեղեցին որ 'ի մէջ Սսոց նիսաւ
 ձգեալ այրեցին . և շիրիմս թագաւորացն քակե-
 ցին . և զբազումս կոտորեցին 'ի բրիստանէից և
 զբազումս գերեցին 'ի յերկրէն և 'ի գեղօրէիցն :
 Եւ ապա յետ աւուրց ինչ դնաց զօրք Թուր-
 քին բազում գանձիւք և աւարաւ յաշխարհն
 իւրեանց , թողեալ զաշխարհս Հայոց կիսաւեր՝
 իսկ որք առին զպարոն Աւոն և գիտացին թէ
 ստոյգ որդին է թագաւորին , տարան ուրախու-
 թեամբ առ Սուլտանն . և տեսեալ Սուլտանն ու-
 րախացաւ . բայց ընդ պարոն Թորոսի սպանումն
 յոյժ տրտմեցաւ , և յոյժ բարկացաւ սպանողա-
 ցն . և սպանողքն ասացին թէ մեք ոչ գիտացաք
 թէ որդի թագաւորին է . զի զբազումս ետպան
 'ի մեզանէ , և զբազումս խոցեաց , ապա յետոյ
 մեք ջան 'ի վերայ եղեալ սպանաք զնա :
 Յետ այսորիկ խօսեցաւ Սուլտանն ընդ Աւ-
 ւոնի և ասէ . քո հայրն ինձ ծառայ ասէր , և
 ոչ առնէր սէր . ծառայ այժմ ես եմ թէ դու .

զայս և այլ բազում բանս խրոխտանօք խօսէր
 ընդ թագաւորի որդւոյն, և ապա յետոյ յոյժ
 մեծարանօք սլատուեալ և սիրեալ և ասացեալ
 բանս մխիթարականս չվախել ոչ ինչ, այլ կալ
 ուրակու թեամբ աւուրս ինչ, և ապա դարձու-
 ցանել զնա առ հայրն իւր թագաւորն հայոց,
 և զայս ասացեալ Փնտուխտար Սուլտանին ա-
 ռաքեաց զպարօն Աւուսն 'ի Մար :

Իսկ բարեպաշտ թագաւորն հեթում առ
 ոչինչ համարեալ զայս ամենայն անց աղետից
 առ ժամանակ մի վասն նենգաշարու և երկ-
 միտ իշխանացն, շահելով զբարս նոցա ուրա-
 խու թեամբ սրտի, առ իւր ունելով զայլ մանր
 ուստերսն և զգոստերսն մխիթարէր 'ի նոցանէ
 սուտ մխիթարու թեամբ, վասն շահելոյ զբարս
 իշխանացն և գիտենալոյ զսորամանկ միտսն նո-
 ցա սիրով, զի որ գրէր գիր յիշխանացն վասն
 պակասութեան որդւոցն, և սեւօք կապէր և
 առ թագաւորն առաքէր. թագաւորն գրէր
 պատասխանի և կարմիր կապեալ 'ի թուղթնայն,
 պէս առաքէր, և զայս լեզուն և ձեռքն միայն
 գործէին և շարժէին, բայց զսիրտն ինքն և Աս-
 տուած միայն գիտէին, թէ որպիսի կրակով լը-
 ցեալ էր, զի ոչ տեսանէր զայնպիսի գեղեցկա-
 պատկեր և զճաղկալից սրգիսն իւր, առաջի իւր
 ոչ երեկոյ և ոչ 'ի վաղիւն և ոչ 'ի ժամ ճաշուն
 յուտել և յրմսել, և ընդ միտ ածեալ զանմխի-
 թար աղէտս գեղեցիկ որդւոցն, զթորոսի գե-
 ղեցիկ պատկերն և զվայելուչ հասակն, որ 'ի
 սրոյ բաժանեցաւ յանողորմ և յարիւնարբու

անօր
 դոհի
 թիւ
 թագ
 դալ
 տես
 սգով
 ցեն
 բախ
 այս
 զան
 տու
 Ե
 կրակ
 Առ
 կեղ
 նայն
 պատ
 զովեց
 դաւ
 յորժ
 նայն
 իւր և
 հրամ
 են ոյ
 թագ
 և թա
 և զպ
 ոչ կա
 իշխան

անօրինացն , նոյնպէս և զԼեւոնի ահիւ և ան-
դոհիւ լինելն 'ի մէջ այլազգեացն 'ի ծառայու-
թիւնն . զայս ամենայն զմտաւ . ածեալ բարեպաշտ
Թագաւորն Հայոց՝ այրէր անհնարին կրակով և
գալարէր ազիքն յազագս սիրոյ որդւոցն որ ոչ
տեսանէր . և Թաւաղէր ընդ երկիր անմիտի Թար-
սգով , բայց գաղտ և 'ի ծածուկ . զի մի գիտաս-
ցենն նախանձոտ և տիրատոյան իշխանքն և ու-
րախասցին ընդ տրտմու թիւն Թագաւորին : Եւ
այս գործ գով ծեցաւ յաւօրս յամառնային յե-
ղանակին յետին ամսեանն , 'ի տօնի սրբոյ Աս-
տուածածնին :

Եւ Թագաւորն Հեթում համբեր տուեալ
կրակով լցեալ սրտին և եկաց մինչեւ 'ի տօն սրբոյ
Աւարեւոյն ծածկելով զտրտմութիւն իւր յաներ-
կեղ իշխանացն , և ապա հրամայեաց կոչել զամե-
նայն իշխանսն զոր 'ի հեռի և զոր 'ի մօտ . վասն
պատճառի ջուր օրհնելոյ 'ի քաղաքն Մոսիս . Ժու-
ղովեցան ամենայն իշխանքն որք կային ընդ Թա-
գաւորութեամբ նորա 'ի քաղաքն Մոսիս : Եւ
յորժամ գիտաց Թագաւորն զգալուստ ամե-
նայն իշխանացն , ապա հրամայեաց գալ առաջի
իւր և նստել , և յորժամ ամենն եկին և նստան ,
հրամայեաց սպասաւորացն Թագաւորն թէ այլ
են պակաս՝ կոչեցէք . և նոքա ասացին , սուրբ
Թագաւոր , այննն այս են , որ քեզ առաջի կան ,
և Թագաւորն ստիպէր կոչել զպակաս իշխանսն ,
և զպարօնայսն . իսկ սպասաւորք Թագաւորին
ոչ կարէին իմանալ զմիտս Թագաւորին . ապա
իշխանքն ասացին ջԹագաւորն , թէ զոր դուք

հրամայեալ էք և կոչեալ, ամենն աստ է և շէ
ոք պակաս :

Իսկ թագաւորն զայրագին սրտիւ հայեցեալ
յայտկոյս և յայնկոյս . և ապա հրամայեաց կի-
ռաձայն և արտասուլից աչօք, թէ երբ ամե-
նրն աստ են ապա ուր են Լեւոն և Թորոսն .
յայնժամն սկսան իշխանքն անմխիթար և ծա-
նրս սգով ծեծել զիւրեանց գլուխս և վայ և ե-
ղուկ ասել. յիշելով զգեղեցիկ որդիս թագաւո-
րին իւրեանց զմիւսն 'ի ծառայութիւն 'ի մէջ
այլազգեաց. և զմիւսն սրախողխող եղեալ 'ի ձե-
ռաց անօրինաց. և այնպիսի աղի և ողորմ արտա-
սուօք լային ոչ միայն իշխանքն այլ և քահանայք
և վարդապետք եկեղեցւոյ յերգ արկեալ զողբն
Երեմիայ մարգարէին ոչ ասէ, ս' տայր զգլուխս
իմ շտեմարանս շուրց, և զաչս իմ աղբիւրս ար-
տասուաց. զինստեալ լայի զբեկումն Ժողովըր-
դեան իմոյ: Եւ այսպէս վարդապետքն և քահա-
նայք և իշխանքն լային. և ոչ ոք կայր 'ի մէջ
նոցա որ մխիթարէր զնոսա. այլ կային տարախու-
սեալ 'ի ծանր սուգն բեկեալ սրտիւք :

Իսկ մեծախելք և մեծահոգի թագաւորն
Հեթում, ինքն յինքեան կանգնեաց զբեկեալ
զորտմեալ սիրտն իւր, և ապա խօսեցաւ բա-
նրս մխիթարականս 'ի սիրտս իշխանացն և քա-
հանայիցն և վարդապետացն, այսպէս ասելով.
Գիտէք ամեն իշխանքդ և վարդապետքդ և քա-
հանայքդ, որ Վարդանանցն պատերազմն վասն
քրքիտանէից եղեւ և այսչափ բազմութիւն հե-
ծելոցն վասն քրքիտանէից նահատակեցան և եր-

կնաւ
որդի
մեցա
խառ
նացի
լայք
տոս
եւ զ
խառ
քայո
Ի
յուկ
ւոն
'ի ք
երկր
վասն
գիպ
և այ
Թագ
և 'ի
Թագ
և եւ
գաւ
մխիկ
գաւ
խիթ
սիրտ
նուկ
բեկոյ
գադ

և շէ
լեալ
կի-
ամե-
ուն .
ծա-
և ե-
սւո-
մէջ
է ձե-
տա-
այք
ողըն
ւխո
ար-
վըր-
հա-
մէջ
լու-
որն
եալ
բա-
բա-
լով .
բա-
ասն
հե-
եր-

կնաւոր պատկացն արժանի եղեն . նոյնպէս և սրգին իմ թորոս վասն քրիստոնէից պատերազմեցաւ և վասն քրիստոնէից նահատակեցաւ . և խառնեցաւ 'ի գունդս սրբոց Վարդանանցն . և նոցին պատկացն արժանի եղեւ : Չնա սյլ մի լայք . այլ երանեցէք զնա . զի սիրեաց զնա Քրիստոս , և իւր սրբոցն պատկացն արժանի արար . եւ զարիւն նորա ընդ արեան Մարտիրոսացն խառնեաց ժառանգելով ընդ նոսա զերկնից արքայութիւնն որ 'ի Քրիստոս Յիսուս :

Իսկ Ղեւոն երէց սրգին իմ որ է 'ի ծառայութիւն 'ի մէջ այլազգեացն . ինձ լաւ է Ղեւոն 'ի ծառայութիւն , և թորոս իւր արեամբն 'ի քրիստոնէից սպանած . քան ես այս ամեն երկրիս և ձեր արեանդ , և խղճիդ տիրացած . վասն զի գուք ոչ գիտէիք թէ այս ցեղ չէր հանդիպել ինչ կայր Հայոց երկրիս առաջի : Չայս և այլ բազում բանս միսիթարականս խօսեցաւ թագաւորն և դադարեցոյց զիշխանան 'ի լալոյ և 'ի սգոյ : Իսկ բարեմիտ և բարեկամ իշխանք թագաւորին նա և քահանայք և վարդապետք և եպիսկոպոսք որ էին ժողովեալք առ թագաւորն վասն տօնի սրբոյ Յայանութեան , և միսիթարեցան 'ի թագաւորէն վասն սգոյ թագաւորորդեացն . նոյն և նոքա խօսեցան մըսիթարական բանս բազումս և կանգնեցին ըզսիրա թագաւորին . և արարին զտօն սրբոյ Յայանութեան 'ի միասին ուրախութեամբ միսիթարելով զթագաւորն : Իսկ թագաւորն ոչ կարէր դադարեցուցանել զսիրան 'ի թառանչելոյ և

յողւոց հանելոյ վասն Լեւոնի որդւոց իւրոյ որ էր 'ի Մար ծառայ . և ոչ դտանէր հնարս , թէ որպիսի հնարիւք կարէ զերծուցանել զնա : Եւ ասոյա դարձեալ կոչեաց զիշխանն առաջի իւր թագաւորն , և եհարց զնոսա . թէ որով հընարիւք կարէ հոգալ վասն աղատելոյ Լեւոնի որդւոց իւրոյ :

Իսկ իշխանքն յանդէտս եղեալ մեղադրեցին թագաւորին և ասացին , թէ Շիհն ինչ դտանէ մեզ որ դու վասն Շիհայ զքո որդիքն կորուսեր , և զմեզ նոցա խղճին տիրացուցեր . այն լաւ չէր թէ այն մին գեօղն մեր չէր լեարքան մեք ամեն աշխարհի զրոյց և ծաղը եղաք : Իսկ թագաւորն հրամայեաց իշխանացն լռել յանօգուտ խօսիցն , և լռել 'ի նմանէ զոր ինչ պատուիրեալ էին նմա 'ի ծածուկ Հայոց իշխանքն որ կային 'ի դուռն Ապողայ Ղանին . զի ընդ աւուրան ընդ այնոսիկ էին տաճիկ ամիրայք հոգացողք և բդեաշխք (1) Ղանին , բարեկամ Մորցւոյն 'ի ծածուկ , և չարակամ թագաւորին Հայոց . և ամենայն քրիստոնէից . և Տաճիկ ամիրայքն և հոգցողանին գրեալ էին առ Սուլտանն Մասայ 'ի ծածուկ . թէ Ղանացիք որ սիրով մէկ գիւղ թափես 'ի Հայոց թագաւորէն , և այն նմա կորստեան և իւր երկրին հերիք է և բաւական . մեք ասեմք և հոգամք առ Ղանն որ զՀայոց թագաւորդ իւր ամեն երկրովն աղի բռնէ և հեծեալ յղարկէ և կոտորէ զամենն :

(1) Յօրինանիս Բիշեքչիք :

Իսկ բարեպաշտ Թագաւորն Հայոց զայս ամենն գիտացեալ էր յառաջագոյն և լուեալ ՚ի ձեռն ծածուկ զբոց Հայոց իշխանացն որ կան յԱրեւելքն և են բարեկամք և յոյժ սիրողք այս Թագաւորութեանս . զի գրեալ էին Հայոց իշխանքն առ բարեպաշտ Թագաւորն Հեթումբանս միսիթարականս վասն որդւոցն և վասն երկրիս . և ՚ի վերջն զայս , Թէ ով սուրբ Թագաւոր , քան որ մեք եմք լսել , լաւ է քեզ այդ որ քո մին որդին վասն քրիստոնէից մեռաւ և մինն ծառայ գնաց . և այս Տաճիկքս . . . յամօթ եղան , որ ՚ի յոյս դուռս կան , քան քո Թագաւորութիւնդ ամենն անցած և երկիրդ ընդ մին աւերած և քրիստոնէայքդ կտտորած . վասն զի այս Տաճիկ . . . յամենայն ժամ ստեն ընդ Ղանս Թէ Հայոց Թագաւորն և Մարայ Մուլտանն մի են և մին խօսօք , և մեք Հայոց իշխանքս երդուեալ եմք Ղանին առաջի , Թէ Տաճկանիդ սուտ են մի աւատար դոցա , և այժմ զայդ լսեցին և յամօթ եղեն Տաճկանիս , ու Ղանին սիրան լաւացաւ ՚ի հետ քեզ միահետ . ապա Թէ լեալ էր որ խաբեալ էիր և լուր մին դատարկ տուն էր տուեալ , Թող Թէ Շէն դեւղ որպէս նա ուղէր յոյն ժամն քո Թագաւորութիդ ամեն անցեալ էր . և մեք յամօթ եղեալ իսկ յորժամ զայս ամենայն լսեցին իշխանքն ՚ի Թագաւորէն հիացան ամենն , և մեզայ ասացին Թագաւորին վասն ոչ գիտելոյ զայս ամենայն սրտաճառս բանիս :

ԳԼՈՒԽ ԺԵ •

Բանագնացութիւն Հեթմոյ ընդ Փնտուխտար:
Տ. Յակոբք կաթուղիկոս Հայոց: Դարձ Լեւոնի 'ի գերութենէն, ուրախութիւն Հեթմոյ, հրաժարումն 'ի թաքաւորեչոյ, մենակեցութիւն եւ մահ: Մեռանի եւ Դաւիթ արքայ Վրաց:

Եւ ապա յետ այսորիկ հարցեալ խրատ զԷշխանն թագաւորն Հայոց առաքեաց դեսպանս առ Սուլտանն Մարայ. իմանալ վասն որդւոյն իւրոյ Լեւոնի. թէ ինչ է կամքն Սուլտանին. ինչ տայ եւ գնէ զորդին. իսկ Սուլտանն Մարայ Փնդուխտարն թէպէտ էր Տաճիկ այլ յոյժ ազնկասիրտ էր եւ խոնարհամիտ, զթագաւորորդին Լեւոն խիստ աղէկ էր տուել պահեալ հետոք եւ ամենայն իրօք. եւ յորժամ լուաւ զդեսպանացն գնալն ուրախացաւ եւ ասաց. թէ պիտի որ զԼեւոնս տանիք յիւր հայրն եւ յիւր թագաւորութիւնն. իմ սիրելի ընկեր կայ առ Տաթարն ծառայ. որ ձեր ձեռօք 'ի վեր էի գալ. եթէ զնա ուղէք 'ի Տաթարէն. ձեզ չխնայեն, զնա բերէք Սղուր է անունն, եւ զԼեւոն տարէք. զայս լուեալ թագաւորն Հայոց 'ի դեսպանացն, իսկոյն զուգեաց բազում գանձս եւ պատուական ինչս. եւ գնաց յարեւելք առ Աբաղայ Ղանն. եւ ասաց զամենայն գանգատ զոր արար Մարային ընդ նա եւ ընդ երկիրն իւր. ասաց եւ զխնդիրք Սուլտանին վասն Սղուր ծառային, եւ ոչ կարաց թափել առ ժամն բայց եկն

Լ առ
լն՝ Ս
յերկ
Ի
տանն
առ զ
խնայ
այլադ
յորժ
թէ բ
զոււմ
ւոն.
ընծայ
ուրա
աշխա
տոնէ
Ի
տին
աշխա
թիւն
առան
ւորն
կոպու
Հայոց
թագ
կոպու
բար
որաի
Ե խո
Յակո

և առաքեաց զէղբօր որդին իւր, և ըստ յաջուկե-
լոյն Աստուծոյ գնաց և եբեր զՍղուբ ծառայն
յերկիրս :

Իսկ ընդ աւուրսս ընդ այսոսիկ եկն Սու-
տանն Մարայ 'ի վերայ Անտաք քաղաքին, և է-
առ զԱնտաք և քահեաց զնա 'ի հիմանց, և յան-
խնայ կոտորեաց, որ ոչ պատմի զինչ արարին
այլազգիքն ընդ հաւատացեալս Քրիստոսի : Եւ
յորժամ առաքեաց Թագաւորն առ Սուտանն
Թէ բերաւ զՍղուբն, յոյժ ուրախացեալ և բա-
զում ընծայիւք առ ժառանգն առաքեաց զՆե-
ւոն, և սոքա զՍղուբն յուղարկեցին բազում
ընծայիւք : Իսկ 'ի գալն պարսն Նեւոնի յոյժ
ուրախութիւն եղև Թագաւորին և իշխանաց
աշխարհիս, նոյն և վանորէիցս և ամենայն քրիս-
տոնէից որ ընդ ամենայն երկիր :

Իսկ 'ի պակասելն մահուամբ մեծ հայրապե-
տին Հայոց զմի ամ առանց հայրապետի եկաց
աշխարհս Հայոց, զի Թագաւորն կայր 'ի տրամու-
թիւն վասն սրբւոցն, և այլ ոք ոչ կարէր հոգալ
առանց Թագաւորին, և ապա հարկեալ Թագա-
ւորն յիշխանացն և 'ի վարդապետացն և յեպիս-
կոպոսացն, որ ասացին անպատեհ լինել զերկիրս
Հայոց առանց հայրապետի և կաթուղիկոսի : Եւ
Թագաւորն հարկեայ արար ժողով մեծ եպիս-
կոպոսաց, քահանայից և վարդապետաց, և ա-
րար ընտրութիւն 'ի մէջ նոցա, և եգիտ այր ըստ
սրտի իւրոյ, յոյժ իմաստուն և առաքինի, հեղ
և խոնարհ սրտիւ, և կատարեալ վարդապետ
Յակոբ անուն : Եւ ապա մեծաւ հանդիսիւ օրհ-

արք:
եւո.
նոյ,
իւն
աց:
զէշ-
անս
ւոյն
ին .
րայ
ա-
որ-
կե-
եո-
զի-
ւեր
առ
էի
ա-
ուն
եւ-
և
Ա-
որ
ա-
ա-
կն

նել երեւո կաթուղիկոս , և նստոյց յԱթոռ Սրբ-
բոյն Գրիգորի լուսաւորչին , որոյ պահեսցէ ըզ-
նա Քրիստոս Աստուած սուրբս և անարատս
անբիծ և ուղիղ հաւատով և ուղղափառ խոս-
տովանութեամբ մինչեւ 'ի խորին ծերութիւնն
հովուել զնոր ժողովուրդքս զհաւատացեալքս
Սրբոյ Երրորդութեանն :

Իսկ յայժամ եկն պարոն Վեւն ազատեալ
'ի ծառայութենէ առ ժամայն ընդդէմ՝ գնաց
բարեպաշտ և օրհնեալ թագաւորն Հեթում , և
ղամենայն թագաւորութեան իւրոյ զպարոնու-
թիւն եւ 'ի ձեռս օրդւոյն պարոն Վեւնի , և
ինքն միայնաւորեալ սիրէր զվանք և զանապատ,
և յետ աւուրց ինչ յանկարծակի դիպեցաւ
վէրք ինչ 'ի մարմին նորա , և յոյժ նեղէր զնա ,
և էր նա 'ի սպաս և յաղօթք հանապուղ , մինչ
զի առնել երեւ զինքն կրօնաւոր և Մակար ա-
նուանեցաւ , և յետ սակաւ աւուրց փոխեցաւ
'ի Քրիստոս սուրբ և քրիստոսապասկ բարե-
պաշտ թագաւորն Հեթում , և թաղեցաւ մեծ
պատուով 'ի սուրբ և 'ի հռչակաւոր մենաս-
տանին որ կոչի Դրազարկ , որոյ Տէր Աստուած
փառաւորեցցէ զհոգի նորա ընդ սուրբ թագա-
ւորացն և նոցին պսակացն որք արժանի եղեն ,
ընդ նոսին փառօք փառաւորեցցէ , և երկնա-
յին օթեւանացն ուր սրբոց կայանք են արժա-
նացուցցէ :

Իսկ զկնի մահուան բարեպաշտ թագաւորին
Հայոց , մեռաւ և Վրաց թագաւորն Դաւիթ ,
որ և կարծեմ թէ 'ի միւսմ ամսեան գիպեցաւ

մահ
յոյժ
թիւ
գաւ

Ամբաս
կաջ

3

յուս
կուսն
դի դ
դար
ձով
հարի
գանձ
և զհ
ծեւոյ
պատ
զի զ
թեա
ղամե
նային
գեղօ
սըն
տով
վանե
ին , և

մահ նոցա . զի էին 'ի կենդանութեան իւրեանց
յոյժ սիրելիք և գոյելիք 'ի տես և 'ի գեղեցկու-
թիւն մարմնոց . նոյն և առաջի երկնաւոր թա-
գաւորին Քրիստոսի Աստուծոյ մերոյ լինիցին :

ԳԼՈՒԽ ԺԶ .

Ամբաստանութիւն թագուփարոյ եւ աւերածք,
կաշանաւորի հրամանաւ Աբաղայ Ղանին :

Յետ այսորիկ յեօթն Ղանի որդեացն՝ որ
յուռաջագոյն գրեցաք զի վերեքն սպանին և եր-
կուսն հնազանդեցան , զմէկն յաղի ծովն 'ի բան-
դի դրին . իսկ մէկն 'ի հնազանդելոցն թագու-
դար անուն՝ յոյժ շատացաւ հեծելով և գան-
ձով ոսկով եւ ամենայն ընչիւք . զի երեք
հարիւր ուղտ եւ հարիւր յիսուն սայլ ըզ-
գանձն և զմալն տանէին թող զՉոկս ձիոցն
և զհօտիցն որոց թիւ ոչ գոյր . և էր թիւ հե-
ծելոցն քառասուն հազար , անուանիք և յոյժ
պատերազմողք և աներկեղք յամենայն տեղիս .
զի զկարեւան երկրին կոտորէին աւազակու-
թեամբ պահելով 'ի գիշերի զճանապարհս . և
զամենայն ինչսն առնուին զկարեւանին որ գը-
նային 'ի քաղաքէ 'ի քաղաք . նոյնպէս և զփոքր
գեղորէս 'ի գիշերի ծեծէին և զամենայն ինչ-
ողն և զչորքոտանիսն տանէին և զմարդիկննե-
տով անողորմ խոցէին . նոյնպէս և երթային 'ի
վաներն և զժամարար երէցնին գլխիվայր կախե-
ին . և աղ և ունջ խառնեալ ածէին ընդ քիթ .

սըն ժամարարացն, ասելով. բերէք գինի ծովին չափ, և միս սարին չափ : Այլ և արարին 'ի բազում տեղիս, զի զչանն ագին բռնել տային արեղայցն բերանով 'ի վաներն՝ վասն գինի չունելոյ ողորմելեացն, զի այս էր երդումն նոցա, կամ տալ գինի ըմպելոյ և տանելոյ որչափ ուզէին, և կամ այսպէս ըմբռնել զչանն ագին որպէս գրեցաք :

Եւ այսպէս կային յալեկոծանք վաներն արեւելից յանասախ գլխաւորէն, և զայս գիտացեալ իշխանացն Հայոց և Վրաց, գնացին միաբան առ Աբաղա Ղանն, և ընկեցին զսուտորըս իւրեանց առաջի Ղանին և ասացին. կամ զԹագուդարն տալ 'ի ձեռս նոցա իւր հեծելոյն, կամ զիւրեանցն կոտորել առաջի իւր, և ոչ սեռանել զայնպիսի նախատինսն, որ առնէին առ եկեղեցիսն իւրեանց և առ եկեղեցականսն. նոյնպէս և այլ Տաթար զօրքն գանգատեցան ասել թէ 'ի դուրս զմեզ այլ կու ծեծեն զօրք Թագուդարին, և զմեր ձիանն առնուեն, նոյնպէս և Ղանն գանգատեցաւ առաջի Հայոց և Վրաց զօրացն, այլ և իւր Տաթար գլխաւորացն և ասէ. Թագուդարն մեծացաւ և հարստացաւ, և զմեզ չէ 'ի մռել, և զմեր ասախն չէ 'ի յառնել, և կամի աւիրել զերկիրս իւր, անասախ կարոյն և իւր հեծելոյն :

Ապա հրամայեաց Աբաղա Ղանն Սիրամունին, որ յառաջն գրեցաք այն որ ոսկի սխան անուանեցաւ, առնուլ հարիւր հազար հեծեալս Տաթար, և ետ զնշանն իւր Ղանն 'ի ձեռն Սի-

րամուն
զօրաց
Թագ
նուլ
դարն
Հայոց
վասն
նաց
քաջա
Սիրա
սիրող
րիւր
վերայ
հեծե
րա,
առ
նա, և
րած,
զնա
Չար
մարդ
ոչ իմ

րամուռնին. նոյնպէս հրամայեաց Հայոց և Վրաց
զօրացն գնալ իւրեանց ամենայն ուժով 'ի վերայ
Թագուգարին և անխնայ կոտորել զնա, և առ-
նուլ զամենայն ինչս նորա, և զինքն զԹագու-
գարն կենդանի տանել առ ինքն. և զայս լուեալ
Հայոց և Վրաց զօրացն, յոյժ ուրախացան
վասն ազատելոյ զերկիրն իւրեանց 'ի չարչարա-
նաց Թագուգարին: Ապա կազմեցին զիւրեանց
քաջապէս 'ի գործ պատերազմի. նոյնպէս և
Սիրամուռնն որդի Չաւրմազանին, որ էր յոյժ
սիրող քրիստոնէից, առեալ զնշան Ղանին հա-
րիւր հազար հեծելօք, և յանկարծակի հասին 'ի
վերայ Թագուգարին և անխնայ կոտորեցին ըզ-
հեծեալս նորա, և առին զամենայն գանձս նո-
րա, և զինքն եւթն հարիւր մարդով և տարան
առ Ղանն: Եւ Ղանն տեսեալ ծաղր արար ըզ-
նա. ետ նմա կին մի, և դանակ մի ծայրն կոտ-
րած, և տասն մարդ պա հապան, և յուղարկեաց
զնա 'ի մէջ Աղի ծովուն, որ կայ 'ի Հեր և 'ի
Չարաւանդ դաւառի. և աստ կատարեցաւ բան
մարդարէին որ ասէ. « Մարդ 'ի պատուի էր և
ոչ իմացաւ »:

ԳԼՈՒԽ ԺԷ •

Յաջորդէ Լեւոն զհայր իւր հաճութեամբ Աբաղայ Ղանի : Ընթացք Լեւոնի առ նենգաւորս յիշխանացն : Յայտնութիւն նշխարաց մեծին Ներսիսի : Վերջ :

Իսկ պարոն Լեւոն որդի Հայոց Թագաւորին գնաց առ աջի Աբաղայ Ղանին , և պատմեաց ըզմահ Թագաւորին , և յոյժ սիրեցեալ և պատուեալ եղև ՚ի Ղանէն . առեալ հրաման վն Թագաւորելոյ ՚ի տեղի հօր իւրոցապա . դարձաւ և եկն յերկիրն իւր , և արար ժողով մեծ իշխանաց , եպիսկոպոսաց , քահանայից , վարդապետաց , ՚ի մեծ և ՚ի հոյակապ և ՚ի հռչակաւոր քաղաքն Տարսուս . կոչեաց և զմեծ եպիսկոպոսապետն Հայոց զՏէր Յակոբ : Եւ ապա հրամայեաց ժողովել ՚ի մեծ և ՚ի փառաւոր սուրբ Եկեղեցին ՚ի սուրբ Սոփի , եւ առնել հսկումն և աղօթք , և օրհնել զինքն Թագաւոր . ուստի և կատարեցին իսկ կամօք երկնաւոր Թագաւորին Քրիստոսի , օրհնեցին և օծին եզովն սրբութեան զԹագաւորորդին Լեւոն՝ Թագաւոր ՚ի վերայ ամենայն Հայոց , և եղև ցնծութիւն և ուրախութիւն մեծ ամենայն աշխարհիս Հայոց , և եղև նոր նորոգումն և նոր ուրախութիւն ազգին Ռուբինեաց :

Իսկ ինքն արքայածին արքայն Լեւոն , եր յոյժ խորխոսաց և խելօք ՚ի մանկութենէ իւրմէ , և ճանաչէր զամենայն բարեկամս և զչարս .

կամս
ուեայ
վաս
կային
էին
տաց
ւորո
Թագ
րու Թ
պեղծ
րիստ
դեալ
ւանե
ւանե
ինքե
էին
և յիշ
նու Թ
նամք
զօ Թս
արքայ
րու Թ
զոր ի
խորհ
քրիս
մաստ
մարդ
միաբ
և զոր
ւորան

կամս իւր , բայց ոչ հանէր 'ի լոյս , այլ կայր Լե-
 ուեալ մինչ ծնանել այն որ յղաչեալն էր ցաւօք :
 Վասնզի 'ի յիշխանաց Թագաւորութեան իւրոյ
 կային սմանք որ Հոռոմ էին աղգաւ , և լրեալ
 էին մեծութեամբ գանձու և ամենայն ըս-
 տացուածովք , եւ յետ երից ամայ Թագա-
 ւորութեան նորա խորհեցան չար 'ի վերայ
 Թագաւորին . և կամեցան զչայոց Թագաւօ-
 րութիւնն ջնջել , եւ ինքեանք Թագաւորել
 պեղծ և ուրացող ազգն Հոռոմոց , սուտ քը-
 րիստոնեայքն և ստոյգ Քաղկեդոնիկքն . զի ե-
 դեալ էին 'ի մտի քակել զվանորայքս , և զհա-
 ւանեալսն 'ի յաղանդս նոցա պահել . և զոչ հա-
 ւանեալսն բառնալ 'ի կենաց : Եւ զի ոչ միայն
 ինքեանք էին որ առնէին զոյս , այլ և խաբեալ
 էին 'ի վարդապետաց և 'ի քահանայից Հայոց
 և յիշխանաց սմանց երկմտաց , կալ 'ի մի դաւա-
 նութիւն , և միաբան նենգել Հայոց : Այլ խը-
 նամք արարչին Աստուծոյ ոչ արար անտես զա-
 ղօթս ծառայից իւրոց , այլ պահեաց զարքայածին
 արքայն Հայոց զԼեւոն իւր ամեն Թագաւօ-
 րութեամբն հաստատուն և անփորձ 'ի չարեացն
 զոր խորհեալ էին . և ինքեանք որ զչարսն էին
 խորհեալ անկան 'ի գուբն զոր փորեալ էին . զի
 քրիստոսապսակ Թագաւորն Լեւոն իւրով ի-
 մաստութեամբն ըմբռնեաց 'ի չարախորհուրդ
 մարդկանցն , և եգիտ գրեալ գիր զանուանա
 միաբանելոց 'ի չար խորհուրդն յայն , զոր Հայ
 և զոր Հոռոմ , և առաքեաց զմիամիտ սպասա-
 ւորան իւր ըմբռնեաց զնոսա , զոմն եսպան , զոմն


Ա-
 նեն-
 րաց
 որին
 ԸԳ-
 եալ
 որե-
 թիկ-
 սկո-
 ծ և
 ուս .
 Տէր
 ծ և
 փի .
 ինքն
 սմօք
 ն և
 Լե-
 եղև .
 աչ-
 նոր
 էր
 եւր-
 րա .

եղ 'ի բանտի անդերձանե լի , զոմն տարաւ առ
Աբաղայ Ղանն յարեւելք , և անդ յաստին հա-
տուցին . և զայլ ամեն թշնամիսն ետուն 'ի ձեռս
նորա և հրամայեցին թէպէտ պահել թէպէտ
սպանանել :

Եւ այսպէս զօրացեալ և յաղթող գտեալ 'ի
վերայ թշնամեաց իւրոց թագաւորն Հայոց
Լեւոն օգնութեամբ երկնաւոր թագաւորին
Քրիստոսի . որոյ և աղօթիւք ամենայն սրբոց
Քրիստոս Աստուած յաղթող պահեսցէ զթա-
ւորութիւնն Լեւոնի Հայոց թագաւորին , բա-
րի զաւակօք իւրովք 'ի վերայ ամենայն թշնա-
մեաց իւրոց , և զիեանս նորա տացէ եկեղեցւոյ
իւրում Քրիստոս Աստուած ընդ երկայն ժա-
մանակս :

Ընդ այս աւուրքս յայտնեցաւ պատուական
և սուրբ նշխարք մեծին Ներսիսի Հայրապետին
Հայոց յիւրեանց հանգստարանին , որոյ սուրբ
աղօթիւք նորա տացէ Քրիստոս Աստուած խա-
ղաղութիւն ամենայն աշխարհի , և նմա փառք
յաւիտեանս , ամէն :


Կատարեցաւ պատմութիւն Տաթարիս գոր-
ծելոց քառասուն և չորք ամաց . բայց համառօտ
և ոչ ամենն :



ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՄԱՏԵՆԻՍ

Յամի եւթն հարիւրերորդի քսաներորդի
Թուականութեանս Հայոց (1271) . դրեցաւ աշ-
խարհապատում տառս այս հրամանաւ սուրբ
և փառաւորեալ հօր Ստեփաննոսի Ականց ա-
նապատիս , այլ և կամսկցութեամբ փակակալի
սուրբ անապատիս Վարդանայ և ամենայն եղ-
բայրութեանս քահանայից եւ կրօնաւորաց ,
ձեռամբ տառապեալ գրչի Գրիգորոյ սպասա-
ւորի բանին :

Արդ աղաչեմք զպատահեալդ 'ի սմա , որ
ոք ընթեռնոյք զաշխարհապատում տառս զայս ,
յիշեցէք 'ի Քրիստոս զհայրն Ստեփաննոս , և
զճնողն իւր , ընդ նմին և զամենայն եղբայրու-
թիւնս սրբոյ Անապատիս , զքահանայքս և ըղ-
կրօնաւորքս , և զմեղուցեալ գրիչս . զի դուք
որ յիշէք զմեզ , յիշեցէ՛ք և զձեզ Քրիստոս
Աստուած յողորմութիւն իւր , ամէն :



Faint, illegible text at the top of the page, possibly a title or header.

Main body of faint, illegible text, appearing to be several paragraphs of a letter or document.

Faint, illegible text at the bottom of the page, possibly a signature or footer.

9-L.

"

"

"

"

"

ՅԱՆԿ ԳԼԽՈՑ

ԵՐՍ

- Գ.Լ. Ա. Վասն Ազգին Նետոցաց թէ ուս-
տի կամ յորմէ ցեցէ անեցին եւ
տիրեցին բացում աշխարհաց եւ
գաւառաց : 9
- ” Բ. Վասն կեցութեան, կրօնից, օրի-
նաց եւ գշխաւորի նոցա : 11
- ” Գ. Առաջին դատերացն թաթարաց
ընդ Պարսիկս . ադա ընդ ԱՅ-
ուանս եւ ընդ Վիրս . եւ գի-
մագրութիւն եւ երկայնակե-
ցութիւն նոցա : Հոյատակու-
թիւն Հայոց եւ Վրաց : 15
- ” Դ. Ասոց գիսաւոր, վերստին յարձա-
կումն թաթարաց, եւ յետս կա-
շըն յաւերեշոյ ցաշխարհս նը-
ւանեալս . եւ բաժանումն աշ-
խարհաց ՚ի գշխաւորսն : 17
- ” Ե. Հարկատուութիւն իշխանացն
Վրաց եւ Աջուանից . եւ վա-
նական վարդապետ Հայոց : 21
- ” Զ. Պատերազմունք եւ աւերածք Բա-
շու նուինին ՚ի կարնոյ բացաք
եւ ՚ի Հոռոմսի : 25

- ԳԼ . Է . Խորհուրդ եւ հարկատուութիւն
բարեդաշտ արքային Հայոց
Հեթմոյ՝ Թաթարաց : 27
- ” Ը . Դարձ եւ Թագաւորութիւն ար-
քայորդւոյն վրաց Դաւթի ՚ի
կաղանաց ջանիւք վարհամայ
հրամանաւ մեծի Ղանին : 28
- ” Թ . Մահ Չաւրմացանին : Տ . կոստան-
դին կաթուղիկոս Հայոց : Պո-
րոն կոստանդին Թագաւորա-
հայր : Դաւիթ արքայ վրաց
մատնի յիշխանացն իւրոց : Մե-
ռանի վանական վարդապետ : 30
- ” Ժ . Մարտի : Գշխահամար յարեւե-
ղոս : Հեթում արքայ Հայոց
գնայ առ Մանկու Ղանն , եւ
մեծարի դատուոյլ : Եւթն որ-
դիք եւթն Ղանաց : Խուչ ամ-
բարտաւան : Տ . Ստեփաննոս
Վանահայր Գերեթնի վանաց
մարտիրոսանայ : Հիւանդանայ
Խուչ . եղենագործութիւնք ՚ի
դատճառս նորա : Յաջորդէ ըջ-
Խուչ Միգան որդի նորա : 34
- ” ԺԱ . Առումն Պաղատանայ եւ գերու-
թիւն խաչիփային : Անճա-
տուր շինի եւ բացաքն Մար-
տիրոսաց : Աջ սուրբ առաքե-
լոյն Բարդուղիմէոսի : 39

ԳԼ. ԺԲ. Նստի Ղան Հուշաւուն հը-
րամանաւ Մանկաւ Ղանին ,
անհնազանգութիւն եւ դատիժ
չորիցն՝ յեթանց որդւոց եւ-
թն Ղանացն . [կրկին ըմբիշք
եւ ըմբշամարտ : 42

” ԺԳ. Պատերազմունք Հուշաւու Ղա-
նին ՚ի վերայ Հաշբայ , Դա-
մասկոսի եւ Երուսաղեմի , եւ
մահ նորա : 49

” ԺԴ. Մահ կոստանդին իշխանի հօր
Թագաւորին Հայոց Հեթմոյ :
Յաջորդէ զՀուշաւուն Աբա-
ցա որդի նորա : Մեռանի Տ.
կոստանդին կաթուղիկոս Հա-
յոց : Յարձակումն Փնտուխա-
րայ սուշտանին Եգիպտոսի ՚ի
վերայ Հեթմոյ . գերութիւն
Լեւոնի արքայորդւոյն Հայ-
ոց , ցաւ եւ զեծութիւն Հեթ-
մոյ ընդ կորուստ որդւոցն : 54

” ԺԵ. Բանագնացութիւն Հեթմոյ
ընդ Փնտուխաար : Տ. Յա-
կոջք կաթուղիկոս Հայոց :
Դարձ Լեւոնի ՚ի գերութե-
նէն , ուրախութիւն Հեթմոյ ,
հրաժարումն ՚ի Թագաւորեշոյ ,
մենակեցութիւն եւ մահ : Մե-
ռանի եւ Դաւիթ արքայ
Վրաց : 62

ԳԼ. ԺԶ. Ամբաստանութիւն զԹագու-
գորայ եւ աւերածք, կաշա-
հաւորի հրամանաւ Աբաղայ
Ղանին: 65

” ԺԷ. Յաջորդե լեւոն զհայր իւր
հաճութեամբ Աբաղայ Ղա-
նին: Ընթացք լեւոնի առ նեն-
գաւորս յիշխանացն: Յայտ-
նութիւն նշխարաց մեծին Ներ-
սիսի: Վերջ: 68

Յիշատակարան մատենիս: 71



U
J
P
L
L
L

65

68

71



